

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃ. ԴՊ. ԳՐԱԴԱՐԱՆ
№ 2 ԴԱՐԵՐ ՅԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ № 2

ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՍԿԻ

9(075)


2

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՏՈՅՄԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ
ՅԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՅԵՐԱԽԱՅՐԻՔԸ

ՊՐԱԿ Բ.

Փոխադրությունն ունեւեցնից ՅԵ. ԼԱԼԱՅԱՆԻ

Բ. ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

1-1678
A

1017

№ 559

Դրառեպիար № 219 (բ)

Տիրաժ 4000

Պետերատի առաջին տպարան վաղարշապատում

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՏՈՀՄԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ ՅԵՐԿՐԱԳՈՐԾՈՒ-
ԹՅԱՆ ՅԵՐԱԽԱՅՐԻՔԸ.

1. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ՏԻՐԵԼԸ.

Կենդանիներին ընտելացնելը.— Պատահում է, վոր յերբեմն գյուղացի տղաներն անտառում բռնում են նապաստակի ձագ, բերում տուն. և այս առթիվ այստեղ վո՛րջան զվարճություն, վո՛րջան ուրախություն է տեղի ունենում.— Ինչքան ծաղրելի յե նապաստակիկը. նա վախեցած չու՛լ է իր դուրս ընկած աչքերը, շարժում է յերկար ականջները, մեկ մեջքին կպցնում, մեկ ցցում: Վո՛չ միայն յերեխաները, այլև չափահասները հետաքրքրությամբ նայում են գազանիկին: Յերեխաների ուրախությանը սահման չկա: Ամեն ըռպե արձակվում են ծիծաղ և բացականչություններ: «Նալիր, նալիր, ի՞նչ է անում նա ականջներով.— Իսկ դու մատդ նրան մի դիպցնիր, կկծի:— Ե՛, ինչ հիմար բան ես ասում, վրա յե բերում մեծ յերեխաներից մինը, — նապաստակ-

ները չեն կծոււմ: Յեթե գալլի ձագ լիներ՝ գու-
ցե կծեր»:

Նապաստակիկը յերեխաների համար մի աւե-
սակ կենդանի խաղալիք ե: Բռնված նապաստակ-
ները մեծ մասամբ վոչնչանում են կամ վատ
սննդից և կամ յերեխաների կոպիտ վարմունքից:
Յերբեմն ել նապաստակը դուրս ե պրծնում
տնից և շան կերակուր դառնում: Պատահում ել
ե, վոր այս խեղճ գերուն հաջողվում ե փախչել,
ազատվել: Բայց և լինում են դեպքեր, վոր նա-
պաստակը յերկար ապրում ե տնում և կատվի
պես ընտելանում:

Ընտելացած նապաստակին շատ հազիվ ե պա-
տահում, վոր սպանեն՝ միսն ուտելու և մորթին
ծախելու համար: Նրան պահում են տանը յերե-
խաների զվարճության համար: Գյուղական տըն-
տեսության մեջ մի վորևե նապաստակ մի ա-
ռանձին արժեք չի ներկայացնում: Գյուղացին
ունի ընտանի կենդանիներ՝ ձի, կով, միջանի վոչ-
խար և խոզ: Նա ունի նաև հաց՝ կալում և շտե-
մարանում, և առանց նապաստակի յել կարող ե
ապրել: Ուրիշ բան ե, յեթե տանը ուտելու վո-
չինչ չգտնվեր. այն ժամանակ, իհարկե, նապաս-
տակն ել կենդանի չեր մնա: Բայց յեղել ե մի
ժամանակ, յերբ մարդիկ ընտանի կենդանիներ և
հացի պահեստ չեն ունեցել: Դուք արդեն կար-

դացիք, թե նախնական մարդիկ ինչպես եյին
կերակուր ճարուժ: Յե՛վ անցան բազմաթիւ, հա-
զարավոր տարիներ, մինչև վոյ նրանք սովո-
րեցին ընտելացնել կենդանիներին: Թե ինչպես
նրանք հասան այդ գաղափարին, ճշտությամբ
հայտնի չե. մենք կարող ենք միայն վորոշ յեն-
թադրություններ անել:

Ինչի՞ համար գյուղացի քերեխաները խնամում
են նապաստակի ձագին: — Զխարճության: Այս-
պես ել հին ժամանակներում կարող եյին պա-
տահել նապաստակի պատմության նման դեպ-
քեր: Վայրենիւներից վորևե մեկը հաջողացրել ե
բռնել մի գազանի ձագ: Նա կենդանի բերել ե
նրան իր խուղը: Այդ անգամ շատ ուտեստ են
ունեցել և վորոշել են գազանիկին թողնել յերե-
խաներին խաղալու: Գերության մեջ գազանիկը
հետզհետե սովորել ե ուտել այն կերակուրը,
վոր մարդիկ պատրաստել են նրա համար:
Ամառը քաղել են կանաչ խոտ, ձմեռը կերա-
կրել չորացրած խոտով: Անցել ե միառ ժամա-
նակ, գազանիկն ընտելացել ե, մեծացել և դար-
ձել ընտանի: Բայց ահա հասել են դժվարին,
ծանր օրեր, վորսորդությունը հաջող վորս չի
տվել, արժատներ և պտուղներ քիչ են յեղել:
Մարդիկ սկսել են քաղցել: Ահա այսպիսի ժա-
վանակ հարկավորվել ե ընտելացած գազանը.

ներան մորթել են և նրա մսով մի յերկու որ
կերակրվել:

Ահ են բանի սկիզբը դժվար ե լինում: Այսպես
ել յեղել ե և այս բանում: Մարդիկ շուտով լմբո-
նել են կենդանիներին ընտելացնելու ահագին
ոգուտը. նրանք հասկացել են, վոր սա վորսոր-
դութունն չե, վոր վորսորդության միջոցին դեռ
հարց ե, թե կհաջողվի վորսին սպանել՝ քաղցած
փորը տանջանքից ազատելու համար, իսկ այս-
տեղ ուտեստի պահեստը միշտ ապահոված ե:
Ոգուտն ակներև ե:

Անասունների աճեցումը. — Մարդիկ սկսել են
ընտելացնել կենդանիներին, սակայն, վնչ բոլոր
գազաններին կարելի չե ընտանի կենդանի դարձ-
նել: Գայլին և արջին թեյեվ կարելի չե վորոշյալ
չափով կրթել, սակայն և այնպես չի կարելի ըն-
տելացնել: Իզուր չե կազմվել հետևյալ առածը,
թե վորքան ել գայլին կերակրես, այնուամե-
նայնիվ նա շարունակ դեպի անտառն ե նայում:
Յեվ այդպիսի կենդանիներ շատ կան: Գիտնա-
կանները հաշվել են, վոր 140,000 զանազան տե-
սակի կենդանիներից և թռչուններից ընտելաց-
րած են միայն 50 տեսակը: Բայց և միքանի
կենդանիներ մարդկանց համար շատ պիտանի յեն
դարձել: Նրանք առանց դժվարության ընտելացել
են և արագությամբ աճել գերության մեջ: Մար-

դիկ ստիպված են լեղել միայն փոքր ինչ հոգալ
նրանց ուտեստի մասին և պաշտպանել նրանց
գիշակեր գազաններից:

Առաջին ընտանի կենդանին լեղել է շունը:
Սա մարդու ամենահին բարեկամն է: Նա ոգնել
է նրան վորս անելու: Վաղ է ընտելացրած նաև
խոզը:

Դաշտային տեղերում աճել են խոշոր սմբա-
կավոր կենդանիներ, վորոնց հավար հարկավոր է
մեծ տարածություն. սրանք են՝ ձիերը, յեղջյու-
րավոր կենդանիները, ուղտերը, լեռնային տե-
ղերում՝ ալծերը, վոշխարները: Սկզբում՝ ընտե-
լացած կենդանիները ծառայել են մարդկանց
միայն վորպես սննդյան ու ժանդակ միջոցներ:
Մարդկանց գլխավոր զբաղմունքը մնում էր դար-
ձյալ գազաններ վորսալը:

Անցել են հարյուրավոր տարիներ: Տավարի
քանակը քիչ քիչ ավելացել է: Հասել է մի ժա-
մանակ, յերբ գազաններ վորսողը բոլորովին թո-
ղել է վորսորդությունը, վորպեսզի զբաղվի տա-
վարի պահպանությամբ - անասնապահությամբ:
Այսպես հետզհետե թափառական գազանորսները
դարձել են հովիվ անասնապահներ: Այն միջոցին
նրանց շատ ավելի քիչ տարածություն է հար-
կավոր լեղել, քան թափառական վորսորդության
ժամանակ: Մի գազանորսի հարկավոր է 900 դե-

սխատին, իսկ այդպիսի տարածութեան վրա կարող են ապրել 10 անասնապահ:

Սակայն մարդիկ ել ամեն տեղ կարող եյին անասնապահութեամբ պարապել: Սրա առաջին պատճառն այն է, վոր վոչ ամեն տեղ գտնվում են սմբակավոր մեծ կենդանիներ, վորոնց կարելի չէ ընտելացնել: Որինակ՝ Ամերիկայում մինչև յեվրոպացիների յերևալը ձիեր չեն յեղել: Նրանց բերել են Յեվրոպայից 400 տարի մեղանից առաջ: Յերկրորդ պատճառն այն է, վոր անասնապահութեան համար հարկավոր են լոյն արոտատեղիներ. իսկ այդպիսիներ ամեն տեղ չեն գտնվի: Այս պատճառով ել անտառային ձորերում, ճահճային ճումբերում (трущобах), ուր արածելու խոտ չկա, մարդիկ առաջվա նման ապրում են բացառապես վորսորդութեամբ և ձգնորսութեամբ: Նրանք չեյին կարող հոտեր պահել նաև ավազոտ անապատներում: Աֆրիկայում և Ավստրալիայում դեռ հիմա չեւ այնպիսի հետամնաց ժողովուրդներ կան, վորոնք բացի շներից ուրիշ ընտանի կենդանի չունեն: Նրանք վորսորդութիւնն են անում շների ոգնութեամբ: Սակայն յերբ ուտեստը պակասում է, մոլթում են այդ շներին և ուտում:

Զուելցի յեվ Եարադուրյան համար.— Արդյոք, վորևէ գաղան կամ թռչուն չե՞ք ընտելացրել: Շատ

Ժամանակ եր հարկավոր, վոր կենդանին ընտելա-
նար: Յեթե ինքներդ չեք ընտելացրել, տեսելեք, ար-
դյոք, մինի մոտ ընտելացրած նապաստակ, սկյուռ,
ագռավ կամ մի այլ կենդանի: Քանի՞ անգամ ավե-
լի տեղ ե հարկավոր վորսորդին, քան թափառա-
կան անասնապահին:

2. ՆՈՐ ՔՈԶԱՏԵՂՈՒՄ.

Այս տեղի յե ունեցել վեց հարյուր տարի մե-
զանից առաջ: Հունիս ամիսն եր. մեծ իրարան
ցում եր տիրում թաթարական իշխան միրզա-
Շամհայի կայանում: Թաթարներն այս ու ալն
կողմ եյին վազվզում, ինչպես մրջյունները վըր-
դովված մրջնանոցում: Ի՞նչ եր պատահել:

Այրիւի սկզբից Շամհայը և նրան յենթակա
թաթարները քոչում են իրենց հոտերով ազատ
դաշտերում Վոլգա գետի ընթացքով, այժմյան
Սարատովի և Ցարիցինի նահանգների տեղերում:
Բայց յերեք ամսից արոտներն արդեն արածա-
ցրած եյին, և անասունների համար այլևս կեր
չկար: Պետք եր հոգալ նոր արոտների մասին:
Իշխան Շամհայը հրամայեց պատրաստվել քոչե-
լու նոր տեղեր: Հենց վոր հրաման տրվեց, իս-
կույն սկսվեց իրարանցումը: Թաթարներն շտապ
դարսում եյին իրենց իրերը սայլերի վրա, քան-
դում եյին վրանները:

Թաթարները, ինչպես և մյուս թափառական
ժողովուրդները, տներ չունեին: Նրանք ապրում
էին խռվից և ցցերից շինած վրանանման դագա-
ներում (юрта), պատերն ու առաստաղը ծածկվում
էին թաղիքով, դռները նույնպես թաղիքից էին:
Նոր տեղ քոչելիս մի քանի դագաներ կարելի չէր
մասերի բաժանել. մյուսներն ամբողջովին տար-
վում էին մեծ սայլերով: Հետևյալ որն առավոտ-
յան բոլորը պատրաստ էին ճանապարհ ընկնելու:

Բարձրագույն սայլերին լծված էին յեզներ: Չքա-
վորները լծում էին մի յերկու զույգ, հարուստ-
ները, — նրանց ունեցվածքն էլ շատ էր և դագա-
ներն ընդարձակ, — լծում էին և՛ տասնյակ զույգ
յեզներ: Միրզա Շամհալի ահագին դագան փո-
խադրում էին ամբողջովին: Սրա համար հար-
կավոր էր լծել սայլին բաժան զույգ յեզներ: Թա-
թարները բոլորն էլ ձիավորված էին. կանայք,
աղջիկներ և պատանիներ տղամարդկանցից պա-
կաս չէին ձիավարում: Միայն հիվանդները, ինչ-
պես և զառամյալ ծերունիները, գնում էին
սայլերով: Սայլերը քշում էին ստրուկները՝ կա-
շե մտրակներով. ստրուկներն էին քշում նաև
յեղջուրավոր կենդանիների, ձիերի նախիրներն
ու վոչխարների հոտերը: Ձիավոր թաթարների
առանձին խմբակներ վերահսկում էին սրանց
վրա:

Շամհայի տված նշանով ահագին սայլաշարքը
շարժվեց տեղից, և այստեղ սկսվեց այնպիսի մի
յերաժշտութիւն, վոր անսովոր մարդը կարող
եր խլանալ: Հազարավոր, չյուղած անիմներն
արձակուժ Ելին ականջ խլացնող ճոնչիւն. բղա-
վում Ելին սայլապանները, մտրակները ճալթե-
ցնելով, յեզները բառաչում Ելին, վոչխարները
մայում: Գոռում-գոչումով հետևում Ելին սայ-
լաշարքին թաթարները ցածրահասակ, բաց արա-
գավազ, թաթարական ձիերի վրա: Մոտ մի շա-
բաթ տևեց թաթարների ճանապարհորդութիւնը
դաշտավայրում: Վերջապես Շամհայը հավանեց
գետի ափին մի տեղ և հրամայեց խփել այդտեղ
դագաները:

Աշխատանքն սկսեց յեռալ: Գետից մոտ 50
սաժեն հեռավորութիւն, փոքրիկ բարձրավան-
դակի վրա խփեցին դագաներ միրզայի և նրա
տնեցիների համար: Բազմաթիվ ստրուկներ հար-
թում Ելին դագաների համար տեղեր, մյուսնե-
րը խփում Ելին ցցեր, ձգում թաղիք, կախում
գորգեր: «Շտապեցրեք այս ծուլներին, — ասաց
միրզան ստրուկների վերակացուն, — դագաները
պետք Ե գիշերվա համար պատրաստ լինեն»: —
«Մի անհանգստանաք, միրզա, — պատասխանեց
վերակացուն, — բոլորը ժամանակին պատրաստ
կլինի»: Յեվ հերավի, յերեկոյան ամբողջ իջևանը

կազմակերպված եր, կարծես թե բոլոր ժամա-
նակ այդտեղ եր յեղել: Մինչև ուշ գիշեր շա-
րունակվեցին չարչարանքն ու աղմուկը, բայց
հետզհետե դադարեցին, և ամենքը խորասուզվե-
ցին քնի մեջ:

Այսպես ելին ապրում թաթարներն ազատ
դաշտերում վեց հարյուր տարի մեզանից առաջ:
Այժմ ել Սարատովի և Կապանի նահանգնե-
րում, Ղրիմում, Կովկասում կան բազմաթիվ
թուրքեր: Սբանք սերունդներն են այդ թափա-
ռականների, վերոնք մի ժամանակ թափառում
եյին ընդարձակ, ազատ դաշտերում: Բայց նրանք
այլևս չեն թափառում, այլ նստակյաց կյանք
են վարում գյուղերում: Թուրքերի մի մասը
պարապում ե յերկրագործությամբ, մյուսը՝ առև-
տրով: Յեվ միայն թրքական հին յերգերում յեր-
գվում ե թափառական կյանքի մասին, յերբ
թուրքերը դեռևս չեյին ճանաչում գութանն ու
տափանը և ապրում եյին հոտերով ընդարձակ
դաշտերում:

Ջրույցի յեվ Եսրազուքյան համար.— Ինչո՞ւ թա-
փառական թաթարները չեյին կարողանում ապրել
անտառներում: Ինչո՞վ եյին սնվում թափառական
ները: Քոչվորները կարո՞ղ են արագ առաջ շարժվել:

3. ԲՈԶՎՈՐՆ ՈՒ ՅԵՐԿՐԱԳՈՐԾԸ.

Անոգ՝ հացի վերաբերմամբ. — Կիրգիզյան ան-
վերջ դաշտավայրը տարածվում է ամեն կողմ:
Սրա վրա ապրում են ռուս-քոչվոր կիրգիզները:
Նրանց գլխավոր պարապմունքը անասնապահու-
թյունն է: Կիրգիզները պահում են ձիերի ջո-
կեր, յեզների, ուղտերի նախիրներ, վոչխարնե-
րի հոտեր և ամբողջ տարին արածացնում են
նրանց ընդարձակ դաշտավայրում: Գարնանը,
հենց վոր հալչում է ձյունը, կիրգիզները թող-
նում են իրենց ձմեռային կայանները և սկսում
են քոչել:

Վորոշ ժամանակամիջոցին տուն-դագաներն
ու ամեն բարիք հավաքված և բարձված են ուղ-
տերի և սալերի վրա: Ճանապարհ են ընկնում
սովորաբար առավոտյան 9 – 10 ժամին: Առջևից
գնում են մեծերը, սրանց յետևից շարժվում են
տավարի նախիրները, հետո գյուղի (աուլի) ամ-
բողջ տղամարդ բնակչությունը: Տղամարդկանց
յետևից գնում են կանայք և յերեխաները ձի
նստած, սրանց յետևից՝ ուղտերն ու սալերը՝
բարձված բեռներով: Շուրջը տիրում է կանաչ
դաշտը բոցավառված գարնանային արեգակի
պայծառ ճառագայթներով: Յեվ այս դաշտա-
վայրով հանդարտ առաջ են շարժվում կիրգիզ-

ները: Յերբմն մինչև 10 վերստ ձգվում են քոչ-
վորները: Ավագները նշան տվին, և գնացքը
կանգ առավ: Սովորաբար կայան ընտրվում է
ջրի մոտ: Տավարը թողնում են դաշտը՝ արա-
ծելու թարմ արոտներում: Ուղտերի ու սայլերի
վրայից վար են բերում բեռները, և մի կարճ
միջոցից դաշտում կազմվում է չերկու-չերեք
տասնյակ դագաններից բաղկացած բնակավայր:

Կիրգիզները մի տեղում ապրում են այնքան,
վոր տավարն ամբողջ խոտը արածում, վերջա-
ցնում է, հետո քոչում են առաջ: Ամեն մի բնա-
կավայր իր քոչելու շավիղն ունի: Այս շավիղ-
ները ծառայում են վորպես սահմանաչափու-
թյան նշաններ և դաշտավայրը բաժանում են
կիրգիզների մեջ:

Մինչև խոր աշուն թափառում են կիրգիզները
դաշտավայրում: Նրանք ուղիղ առաջ չեն գնում,
այլ աղեղնաձև, այնպես վոր ձմռան նորից վե-
րադառնում են առաջվա ձմեռային կայանը:
Այդտեղ ամեն մինն ունի մշտական ձմեռային
բնակարան—փայտե խղճուկ հյուղ կամ խուղ:
Սրանց մեջ են անցկացնում կիրգիզները ձմեռը,
իսկ գարնանը նորից սկսում են քոչել:

Տավարը քոչվորների համար ամեն ինչ է: Նա
տալիս է նրանց հանդերձ, սնունդ և խմիչք:
Կաթն ու միսը կազմում են կիրգիզի գլխավոր

սնունդը: Կենդանիների մորթիներից նրանք պատ-
րաստում են հանդերձ, բրդից՝ թաղիք, վորով
ծածկում են իրենց դագաները: Նրանք ձիեր ու
վոջխարներ փոխանակում են ռուսների մոտ հա-
ցի և գործարանային զանազան գործվածքների,
զենքերի հետ:

Իրենք կիրգիզները յերկրագործությամբ չեն
պարապում: Նրանք ի սկզբանե անտի թափառա-
կան են: Հիրավի, նրանց դժվար եր յերկրագործ
դառնալ: Կիրգիզյան դաշտավայրի կլիման խիստ
ե և հարմար ե միայն անասնապահության: Ան-
ձրեններ շատ հազիվ են տեղում. ձմեռը սաստիկ
ցրտեր են անում, իսկ ամառն այրում ե շոգը:

Կլիմայի տեսակետից հարմար տեղերում կիր-
գիզներն ս'լսել են յերկրագործությամբ ել պա-
րապել: Այսպես են, որինակ, Սիբիրում ապրող
յակուտները: Վաղուց չե, վոր նրանք կիրգիզ-
ների պես թափառական կյանք ելին վարում,
բայց վերջերս բացի քոչելուց, սկսել են և՛ մշա-
կել յերկիրը:

Այժմ քոչվորներին հեշտ ե հողագործ դառ-
նալ: Յե՛վ կիրգիզյան դաշտավայրում, և՛ յակուտ-
ների շրջանում քոչվորների կողքին ապրում
են ռուս գաղթական գյուղացիներ: Իսկ ռուս-
ները հմուտ յերկրագործներ են: Քոչվորները
կարիք չունեն մտածելու, թե ինչպես պետք ե

վարել և ցանել: Նրանք ուղղակի ընդորինակում
են հարեան ուսանելից վարուցանքի յեղանակ-
ները:

Յերկրագործը կարող է, արդյոք, թափառական
կյանք վարել. — Պատմեցինք, թե ինչպիսի կյանք
են վարում թափառական կիրգիզները, վորոնց
ապրուստը հալթայթում է իրենց հոտը: Այժմ
տեսնենք, թե յերկրագործն ինչպես է ճարում
իր ուտեստը:

Գարունը յեկավ, և ժողովուրդը շարժվեց ա-
վաններում և գյուղերում: Գարնան գալով նրա
համար ծանր աշխատանք է սկսվում: Աշնանա-
ցանն արդեն տեղի յե ունեցել աշնանը, այժմ
պետք է հոգալ գարնանացանի մասին և մշակել
բանջարանոցը: Դեռ ուրիշ շատ աշխատանքներ
ել կգտնվեն տնտեսութեան վերաբերմամբ: Մեկ
տեղ պետք է նորոգել քանդված պատը, մյուս
տեղ՝ հարթել կտուրը, պետք է կարգի բերել գու-
թանը, տափանը, սալը:

Ձմռան հանգստից հետո բոլոր տներում սկսում
է յեռալ աշխատանքը: Վերջապես բոլոր նախա-
պատրաստութիւնները կատարված են լինում,
և սկսվում է վարը: Կենդանացել են լուռ դաշ-
տերը: Այստեղ-այնտեղ լսվում են հոռովելներ՝
«Դեհ, քաշեցեք, իմ զուլգ յեզներ, մի ծուլա-
նաք»:

Վերջացավ վարը: Պետք է ցանել վարսակ և
գարի: Սրանցից հետո հերթը գալիս է կարտո-
ֆիլին, կանեփին, սիսեռին: Մի աշխատանքը դեռ
չվերջացած՝ արդեն յերկրորդի հերթն է գալիս:
Յերկրագործն առավոտը շատ վաղ գնում է դաշտ,
ուշ յերեկոյան վերադառնում է տուն: Շտապ
ընթրում է և պառկում քնում. չէ վոր առավո-
տը շատ վաղ պիտի վեր կենա:

Ծանօթը վերջացավ: Փոքրիկ ընդմիջումից հե-
տո աշխատանքը վերսկսվում է. պետք է հնձել
և հավաքել խոտը, իսկ այնտեղ արդեն հասնում
է ցորենը: Սկսվում են ա լառվա դաշտային ծանր
աշխատանքները:

Յերկրագործը շատ աշխատանք պետք է գործ
դնի, շատ քրտինք թափի, մինչև վոր հացահա-
տիկները գան կալը և լցվեն շտեմարանները: Հա-
ցահատիկները հավաքելուց հետո կարելի յեր մի-
քիչ հանգստանալ, բայց տես, վոր պետք է շտա-
պել կատարելու աշնանացանը:

Յեվ այսպես՝ ամեն տարի. վաղ գարնանից
մինչև խոր աշունը, մի աշխատանք տեղի յե տա-
լիս մյուսին: Յերկրագործները վարում են, ցա-
նում, աղբով պարարտացնում, հնձում, հավա-
քում, նորից վարում և ցանում: Յեվ պետք ա-
մեն մի աշխատանք կատարել իր ժամանակին,
չուչացնել վոչ ցանքս և վոչ հունձը, այլապես

առանց հացի կֆնան: Այսպես ե յերկրագործի
աշխատանքը:

Ծանր ե այս աշխատանքը և մարդուն ամուր
մեխում ե մի տեղում: Արտը ձմեռ-ամառ կերա-
կրում ե նրա ընտանիքը, և իզուր չե, վոր մարդն
արտին կոչում ե իր ստնտու: Սրա համար ել չի
թույլ տալիս իրենց հեռանալ: Արտերը չի կարե-
լի տանել իր հետ, տեղափոխել, նրանցից շատ
հեռանալ: Հեռանալ գուցե և կարելի լիներ, բայց
այս դեպքում նա կդադարի կերակրելուց. իսկ
երկրագործը սովորել ե ապրել իր հայրենի դաշ-
տի վրա թափած աշխատանքով: Նրա հայրերն
ու պապերն այդպես են ապրել, վարել ալդ միև-
նույն արտը: Այս պատճառով ել յերկրագործ ժո-
ղովուրդները միշտ նստակյաց կյանք են վարում,
այսինքն միևնույն տեղումն են ապրում: Այսպես
են ապրում հայերը, ռուսները, վորոնք պարա-
պում են գլխավորապես յերկրագործությամբ:

Ընդարձակ Չինաստանը նույնպես յերկրագոր-
ծական յերկիր ե: Յեվ չինացու աշխատանքը հայ
յերկրագործի աշխատանքից թեթև չե: Չինաս-
տանում գլխավոր սնունդը բրինձն ե: Չալթուկի
մշակությունը շատ խոնավություն ե պահան-
ջում, և չալթուկի արտն ուղղակի մի ճահիճ ե
ներկայացնում: Չինացիները թափառում են այս
ճահճային դաշտերում և ջրում չալթուկը: Մի յե-

րեք անգամ տեղի չե ունենում այս վոռոգումը,
մինչև վոր չալթուկը հասնում ե: Այս շատ ծանր
և հոգնեցուցիչ աշխատանք ե: Ստիպված են աշ-
խատել մինչև մեջքը ջրի, ցեխի, տղմի մեջ ըն-
կըղմված և ձեռքերով քաղհան անել:

Տարբեր միջոցով են հայթհայթում իրենց կե-
րակուրը լերկրագործական ու թափառական ա-
նասնապահը: Այս պատճառով ել նրանք տարբեր
կյանք են վարում: Տարբերությունը միայն նրա
մեջ չե, վոր անասնապահները տարվա մեծագույն
մասն զբոսնում են ընդարձակ դաշտերում իրենց
հոտերով, իսկ լերկրագործը նստակյաց կյանք ե
վարում: Յերկրագործն ել ստիպված ե նույնպես
լերկար ճանապարհորդել և ման գալ: Նա տանում
ե քաղաք ծախելու գյուղատնտեսական զանա-
զան սթերքներ: Շատ անգամ վոտքով գնում ե
կամ լերկաթուղով ուղևորվում տնից շատ հեռու՝
աշխատանքի: Յեվ, յեթե հաշվենք, կտեսնենք,
վոր լերկրագործներից միքանիսը տարվա ընթաց-
քում շատ ավելի ճանապարհ են կտրում, քան
անասնապահն իր քոչի միջոցին: Յերկրագործը
նույնպես պահում ե անասուններ, և յերբեմն
շատ ավելի անասուններ ե ունենում, քան մի
վորևե քուրդ կամ կիրգիզ, բայց և այնպես նա
չի թափառում, այլ նստակյաց կյանք ե վարում:
Այս նրանից ե առաջանում, վոր նստակյաց

մարդն իր աշխատանքով ուտեստ ե ձեռք բե-
րում թե իր և թե անասունների համար: Նա
բարելավում ե խոտի հունձը, մարգագետիննե-
րում ցանում ե ճարակի խոտեր, արտերում՝ հա-
ցահատիկներ և անհրաժեշտ պաշարը տեսնում,
իսկ քոչվորն իր հոտերը կերակրում ե բնության
պատրաստած ուտեստով. նա իր ամբողջ կյան-
քում չի բուսցնում խոտի կամ հացահատիկի մի
ցողուն անգամ, և հենց այդ պատճառով ել նա
թափառում ե իր հոտերով դաշտերում և հնձում,
ինչ չի ցանել:

Յերկրագործի, քոչվորի և վորսորդի կյանքի
յեղանակները միմյանցից շատ են տարբերվում:
Ի՞նչ են վորսորդը և քոչվորը: Սրանք թափառա-
շրջիկներ են. մինը թափառում ե վորս վորոնե-
լով, մյուսը՝ արոտատեղիներ իր հոտերի համար:
Իրենք վոչինչ չեն արտադրում, այլ սնվում են
բնության տվածով: Այսպես նրանք դարեր շարու-
նակ ապրեցին և թափառեցին, և վոչ մի հետք
չթողին, բայց չեթե քարի գործիքներ և կենդա-
նիների վոսկրներ: Կարծես սրանք մարդիկ չեն
յեղել, այլ ստվերներ: Ուրիշ բան ե յերկրագոր-
ծը: Սա հաստատվում ե մի վորևե տեղի վրա,
շինում ե տներ, քաղաքներ, շուրջը խրամ փո-
րում, պարիսպներ քաշում: Յերկրագործը չի բա-
վականանում միայն բնության սեղանով, այլ ինքն

ել արդյունաբերում ե՛լ ինչ իրեն հարկավոր ե.
նա թափառաշրջիկ չե, այլ աշխատավոր և թո-
ղել ե յերկրիս վրա խոր ափսոսած հետքեր, վո-
րոնց հազարավոր տարիները չեն կարողացել հար-
թել: Հին յեգիպտացիներից և բաբելացիներից
մնացել են տների, տաճարների և դամբանների
բազմաթիվ ավերակներ, վորոնց հնությունը չորս
հազար տարուց անցնում ե: Հռոմայեցիներն ել,
վորոնք մեզանից 2000 տարի առաջ են ապրել,
նույնպես թողել են շինություններ, խճուղիներ
և քարե ջրմուղներ: Յեվ հռոմայեցիներն ու յե-
գիպտացիները յերկրագործ ժողովուրդներ են
յեղել:

Զրույցի յեվ Շառազրուքյան համար. Ձեր ապրած
կամ գիտեցած գյուղի բնակիչները պարապում են
արդյոք դրսի աշխատանքով: Տնից շատ հեռու յեն
գնում: Ո՞ւր և ի՞նչպիսի աշխատանքների յեն գնում:

4. ԾԵՐԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ.

Ընդարձակ լիճը մեծապես փռված եր ամեն
կողմ և փողփողում եր պայծառ արևի ճառա-
գայթների տակ: Մի հարյուր մետր հեռու, լճի
մեջ, յերևում եր մի կղզի մացառով պատած:
Ափից դեպի կղզին ձգվում եր վորպես կամուրջ
ավազուտը, տեղ-տեղ լայն, տեղ-տեղ նեղ յերի-
զով: Կղզու և ավազուտի վրա հաճախ ճախրում

եյին կարապետներ, և ուրիշ վայրի թռչուններ.
լսվում էր թռչունների բազմազան ճովողությունը:

Լճի ափերն ամայի եյին, միայն թռչուններն
եյին կենդանություն տալիս նրանց. Սակայն մի
անգամ, չերեկոյան դեմ լճի ափին յերևեցան մի
տաս, տասերկու մարդ՝ մեծ ու փոքր: Առջևից
գնում եյին յերեք տղամարդ, սրանց ձեռներին
կային ծառի կեղևից պատրաստված վահաններ,
քարե սլաքներով նիզակներ և հաստ մահակներ:
Միքիշ հեռվից գնում եյին կանայք յերեխաների
հետ և մեջքներին կրում եյին բարակ ճյուղե-
րից կոպիտ և հյուսված կողովներ: Սրանք բո-
լորովին մերկ եյին, թխագույն և գանգրահեր:
Տղամարդիկ մեջքներին ունեյին բարակ գոտի,
վորից քաշ եր ընկած քարե դանակ: Սրանք վայ-
րենի ավստրալիացիներ եյին Մոդեսի տոհմից:

Սրանք յեկան դեպի լիճը, մի ինչ վոր բան
խոսեցին միմյանց հետ, հետո տղամարդիկ ուղ-
ղվեցին դեպի անտառը, վոր գտնվում էր ափից
փոքր ինչ հեռու: Շուտով անտառից միջանի շա-
լակ ճյուղեր բերին և մի կերպ յերկու դագա
շինեցին: Ավստրալիացիները շարունակ գազան-
ներ, թռչուններ և ճաշակելի արմատներ վորո-
նելով թափառում են մեկ տեղից մյուս, և տար-
վա մեծ մասը առանց բնակարանի անցկացնում:
Միայն յերբեմն այնպիսի տեղ են ընկնում, ուր

մեծ բանակութեամբ ուտելիք ե լինում: Ահա
այսպիսի տեղում նրանք շինում են իրենց հա-
մար դագաներ:

Տղամարդկանցից մինը, հասակով ամենամեծը,
սկսեց կրակ անել մի տախտակի և սրածայր
ձողի միջոցով, այդ ընկերին անտառից յերեվե-
ցան ավստրալիացիներին մի նոր փոքրիկ խումբ,
վորից բաժանվեց մի ծերունի, մոտեցավ դա-
գաներին և սկսեց խոսել այստեղի մարդկանց
հետ: Բանակցությունն ըստ յերևութին հաջող
վերջացան, և ծերունին վերադարձավ իր խմբի
մոտ: Հազիվ մի ժամ անցած՝ լճի ափին շինվեց
ելի յերեք դագա, բայց վոչ առաջին յերկուսի
կողքին, այլ միքիչ հեռու:

Հետևյալ օրն առավոտյան լճին մոտեցան ավս-
տրալիական չորս խմբեր ել, յուրաքանչյուրը
15—30 մարդկանցից բաղկացած: Այս խմբից
ամեն մեկը առաջ յեկածներին հետ բանակցե-
լուց հետո, շինեցին իրենց համար դագաներ՝
անպատճառ այն կողմը, վորտեղից լեկել եյին
Այսպիսով լճի ափին կազմվեցան հինգ առան-
ձին բնակավայրեր, վորոնց բոլորի մեջ մի 150
մարդ հազիվ լիներ:

Ուրեմն, այս խմբերը առանձին տոհմերի եյին
պատկանում: Վոչ. լճի ափին հավաքված այս
ավստրալիացիներն ել Մոդեսի տոհմից եյին:

Միայն սրանք վայրենի կամ կիսավայրենի ժողովուրդների պես առանձին խմբերով ելին ապրում, վորպես առանձին սերունդներ: Այն մի տոհմ բռնում ե մի վորոշ տեղ, վորը համարում ե իրենը. առանց իր թույլատվության մի ուրիշ տոհմ հրավունք չունի վորսորդութուն անել այդ տեղում:

Յերբեմն ազգակից խմբերը — սերունդները հավաքվում են մի այնպիսի տեղ, ուր առատ վորս կամ ճաշակելի բույսեր կան:

Այսպիսի տեղ եր նաև Մողեսի տոհմի համար ընդարձակ լճի ափերը: Ամբողջ տոհմը միասին ծերունիների առաջնորդությամբ վորսի լեն գնում, ճաշակելի բույսի արմատներ հավաքում: Իսկ հետո, յերբ մթերքների պաշարը վերջանում ե, նորից զանազան կողմեր են ցրվում:

Ավստրալիացիները շինեցին դագաները և գնացին վորսի: Ավազուտում և կղզում թռչունների բազմաթիվ բներ կային: Տղամարդկանցից մի քանիսը թռչուններ ելին վորսում, մյուսները կանանց և տղաների հետ թռչունների ձվեր ելին հավաքում կողովների մեջ: Առատ սնունդն ուրախացնում եր վայրենիներին. նրանց ուրախ աղաղակները վոչ մի բույս չեյին դադարում, իսկ լճի վրա բողոքավոր աղաղակներով թռչում ելին թռչունների յերաճները, վորոնց բները անգթորեն ավերում ելին մարդիկ:

Շուտով մի լերեք տասնյակ սպանված թըռ-
չուններ և ձվերով լի շատ կողոփներ ափ հան-
վեցան: Կանայք սկսեցին ճաշ պատրաստել, իսկ
տղամարդկանցից շատերը հավաքվեցան լճի ան-
միջական ափին և սկսեցին զրույց անել:

Այս խաղաղ զրույցն ընդհատվեց մի խիստ
հայհոյանքով, վոր լսվեց մի դագայի մոտ: Լճա-
փին չստած ավստրալիացիները վազեցին դեպի
աղաղակը. կանայք թողին իրենց կերակրները վա-
զեցին նրանց հետևից: Այս աղաղակը բարձրաց-
րել էին տարբեր սերունդների պատկանող լերկու-
ավստրալիացիներ: Նրանք խիստ հայհոյում էին
միմյանց և քիչ եր մնում, վոր իրար խփեն:

Ի՞նչից եր առաջ յեկել այս վեճը. - Ավստրա-
լիացիներից մինը, վոր ավելի բալ ձրահասակ եր,
մեղադրում եր հակառակորդին, վոր կախարդու-
թյամբ փասել ե իրան: Ավստրալիացիները, ինչ-
պես և բոլոր տգետ, անզարգացած մարդիկ, հա-
վատում են կախարդության: Նրանք հավատա-
ցած են, թե կախարդը կարող ե մարդուն հի-
վանդություն և նույնիսկ մահ ուղարկել: Յեվ
յեթե մեկը հիվանդանում ե, աշխատում ե կա-
խարդի ոգնությամբ իմանալ, թե ով ե ուղար-
կել այդ հիվանդությունը: Յեվ հենց այս բանի
համար ավստրալիացիների մեջ թշնամություն և
կոիվ ե առաջանում:

Միայն սրանք վայրենի կամ կիսավայրենի ժողովուրդների պես առանձին խմբերով ելին ապրում, վորպես առանձին սերունդներ: Այն մի տոհմ բռնուժ ե մի վորոշ տեղ, վորը համարում ե իրենը, առանց իր թուլատվության մի ուրիշ տոհմ հրավառնք չունի վորսորդութուն անել այդ տեղում:

Յերբեմն ազգակից խմբերը — սերունդները հավաքվում են մի այնպիսի տեղ, ուր առատ վորս կամ ճաշակելի բույսեր կան:

Այսպիսի տեղ եր նաև Մողեսի տոհմի համար ընդարձակ լճի ափերը: Ամբողջ տոհմը միասին ծերունիների առաջնորդությամբ վորսի լեն գնում, ճաշակելի բույսի արմատներ հավաքում: Իսկ հետո, յերբ մթերքների պաշարը վերջանում ե, նորից զանազան կողմեր են ցրվում:

Ավստրալիացիները շինեցին դագաները և գնացին վորսի: Ավազուտում և կղզում թռչունների բազմաթիվ բներ կային: Տղամարդկանցից մի քանիսը թռչուններ ելին վորսում, մյուսները կանանց և տղաների հետ թռչունների ձվեր ելին հավաքում կողովների մեջ: Առատ սնունդն ուրախացնում եր վայրենիներին. նրանց ուրախ աղաղակները վոչ մի րոպե չեյին դադարում, իսկ լճի վրա բողոքավոր աղաղակներով թռչում եյին թռչունների յերաճները, վորոնց բները անգթորեն ավերում եյին մարդիկ:

Շուտով մի յերեք տասնյակ սպանված թըռ-
չուններ և ձվերով լի շատ կողովներ ափ հան-
վեցան: Կանայք սկսեցին ճաշ պատրաստել, իսկ
տղամարդկանցից շատերը հավաքվեցան լճի ան-
միջական ափին և սկսեցին զրույց անել:

Այս խաղաղ զրույցն ընդհատվեց մի խիստ
հայհոյանքով, վոր լսվեց մի դագայի մոտ: Լճա-
փին Նստած ավստրալիացիները վազեցին դեպի
աղաղակը. կանայք թողին իրենց կերակրները վա-
զեցին նրանց հետևից: Այս աղաղակը բարձրաց-
րել էին տարբեր սերունդների պատկանող յերկու
ավստրալիացիներ: Նրանք խիստ հայհոյում էին
միմյանց և քիչ եր մնում, վոր իրար խփեն:

Ի՞նչից եր առաջ յեկել այս վեճը. - Ավստրա-
լիացիներից մինը, վոր ավելի բալձրահասակ եր,
մեղադրում եր հակառակորդին, վոր կախարդու-
թյամբ փասել ե իրան: Ավստրալիացիները, ինչ-
պես և բոլոր տգետ, անզարգացած մարդիկ, հա-
վատում են կախարդության: Նրանք հավատա-
ցած են, թե կախարդը կարող ե մարդուն հի-
վանդություն և նույնիսկ մահ ուղարկել: Յեվ
յեթե մեկը հիվանդանում ե, աշխատում ե կա-
խարդի ոգնությամբ իմանալ, թե ով ե ուղար-
կել այդ հիվանդությունը: Յեվ հենց այս բանի
համար ավստրալիացիների մեջ թշնամություն և
կոիվ ե առաջանում:

Հակառակորդները սաստիկ տաքացել էին և կարծես աքաղաղի պես իրար վրա էին ընկնում: Վերջապես նրանցից մեծը վազեց դիպի իր դազան, վերցրեց հաստ մահակը և արագությամբ հեռացավ բնակավայրից: Այդ միջոցին հակառակորդն էլ իր հերթին զինվեց մահակով և հետևեց նրան, այդ նշանակում էր, վոր վեճը մենամարտով պետք է լուծվի, իսկ մենամարտել կարելի չէ միայն բնակավայրի սահմանից դուրս: Երկուսն էլ ավստրալիացիների սովորությունը:

Բոլոր ավստրալիացիները, թե տղամարդիկ և թե տղաները վազեցին կռվողներին հետևից: Սրանք արդեն սկսել էին կռիվը: Մեղադրողը, բարձրահասակ ավստրալիացին, կատաղությամբ ընկավ թշնամու վրա, և աշխատում էր մահակով խփել գլխին: Սակայն հակառակորդը ճարպիկ էր, և իր մահակով հակահարված էր տալիս: Մահակներն արագությամբ ճոճում էին ողի մեջ և շաշյունով իրար դիպչում: Սերնդակիցները շրջապատել էին կռվողներին և խրախուսում էին նրանց բացականչություններով: Սովորությունը վոչ վոքի թույլ չէր տալիս միջամտելու և ընդհատելու կռիվը:

Բայց անձ դիտող ամբոխի մեջ լավեցան ճշեր և հարվածներ. ամբոխը յետ քաշվեց և տեղ բաց արեց կռվող նոր զույգին, յերկու կանանց, մա-

հակները ձեռներին. սրանք կռվող տղամարդ-
կանց կանաչքն եյին, և իրենց ամուսիններից
վատ չեյին կռվում:

Մոտ կես ժամ տեեց կռիվը, վերջապես մե-
ղադրվողը խլեց հակառակորդի ձեռքից մահակը
և մի ծանր հարված տվեց նրա գլխին, վոր նրան
գետին գլորեց: Միայն այս ժամանակ միջա-
մտեցին տղամարդի՝: Նրանք բաժանեցին իր-
կու կանանց, իսկ վիրավորվածին հրամայեցին
տանել իր դագան: Բոլոր կանանց և տղաներին
նույնպես հրամայվեց վերադառնալ բնակավայր:
Հետո տղամարդիկ սկսեցին գործը քննել: Հաղ-
թողը պետք ե ապացուցեր, վոր մեղավոր չե,
և չե հմայել իր թշնամուն: Մողեսի տոհմի բո-
լոր ծերունիները 7 հոգի, շրջանաձև նստած գետ-
նին, ուշադրությամբ լսեցին մեղադրվողի բա-
ցատրությունը, ինչպես և՛ նրա և հաղթվածի
խմբին պատկանողների վկայությունները: Ծե-
րունիները յերկար քննեցին և դատեցին և վեր-
ջապես վճռեցին, վոր մեղադրվածը մեղավոր չե,
վոր նրա հակառակորդին հմայք ուղարկողը պետք
ե մի ուրիշ մարդ լինի: Այսպիսով ել վերջացավ
գործը:

Իսկ յեթե ծերունիները վճռեցին, վոր մեղա-
դրանքն արդարացի չեր, ինչ կլիներ: Այսպիսի
դեպքերում սովորությունը պահանջում ե մե-

դավորին այնպիսի վերքեր հասցնել, ինչպիսին
նա հասցրել էր հակառակորդին միևնույն զեն-
քով: Իսկ յեթե կռիվը վերջանում է կռվողնե-
րից մինի մահով, և կենդանի մնացողը չի կա-
րողանում ապացուցել իր անմեղությունը՝ նրան
սպանում են:

Այսպես են վայրենի ավատրալիացիների սովո-
րությունն ու բարքը: Վիրավորվածը ինքն է իր
զենքով վիրավորողի դատը կտրում: Բայց դա-
տից հետո կենդանի մնացողը պետք է տոհմի
ծերունիների առջև ապացուցի, Վոր ինքը ար-
դար էր, այլապես պատժի կենթարկվի:

Պատահում է, Վոր մի Վորևե ավատրալիացու
մահվան պատճառ լինողը տարբեր տոհմից է լի-
նում: Այսպիսի դեպքում սպանվածի տոհմը պար-
տավոր է վրեժխնդիր լինել: Նա զինում է Վո-
րոշ վրեժխնդրողների, Վորոնք հետամուտ են
լինում և սպանում հանցավորին: Ազգականի ար-
յան փոխարեն պետք է թափվի հանցավորի կամ
նրա ազգականի արյունը: Սերունդը վրեժ է առ-
նում սերնդից:

Վնչ բոլոր թափառական Վորսորդների մեջ
դատը կտրվել և կտրվում է այնպես, ինչպես այս
տեղ նկարագրեցինք: Թափառական զանազան
տոհմերի խոր, ինչպես և մոտիկ, անցյալում
ունեցած դատավարական սովորությունների մեջ

փոքրիկ տարբերութիւններ են նկատուում. վոչ բո-
լորը միատեսակ են քննել իրենց անդամների վար-
ժուները և պատժել հանցավորներին. սակայն բո-
լոր թափառական տոհմերի մեջ ել՝ դատը միատե-
սակ ել յեղել. նա յեղել ել սերնդի ավագների դատ:

Դատական ուրիշ վոչ մի իշխանութիւն չի յե-
ղել, վորովհետեւ բացի արչունակցական, սերնդա-
կան միութիւնից, ուրիշ միութիւն գոյութիւն
չի ունեցել: Պետութիւն չի յեղել. հետևապէս և՛
չի յեղել վոչ մի պետական դատարան:

Տարբեր տոհմերի մարդիկ, ապրելով միմյանց
հարևանութեամբ, բոլորովին առանձին են կյանք
վարել: Հարևան տոհմերի մեջ հաճախ թշնամա-
կան ընդհարումներ են տեղի ունեցել, և վոչ մի
բան նրանց չի կարողացել միացնել: Սերնդական
փոքրիկ խմբերը, նույնիմկ միևնույն տոհմին
պատկանած դեպքում, շատ քիչ անդամներ են
միացել, միասին վորսալու ուժեղ կամ բազմա-
թիվ կենդանիներին՝ ինկատի առնելով ակնհայտ
ընդհանուր վտանգը: Բայց այսպիսի միացումն ել
ամեն անգամ յեղել ել կարճատև, անհաստատ, և
շուտով լուծվել ել:

5 ԹԱՓԱՌԱԿԱՆ ՏՈՂՄԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ

Բոլորովին այլ կերպ ել կազմակերպվել թափա-
ռական անասնապահ ժողովուրդների կյանքը, մա-

նաւանդ ընտելացած ձիերի ջոկատ և մեծ յեղ-
ջուրավոր կենդանիների նախիրներ ունեցողնե-
րինը: Այս տոհմերը յերբեմն կազմոււմ ելին մեծ
միություններ, վորոնք չեյին նմանվում թափա-
ռական վորսորդների սերնդական փոքր կազմա-
կերպության:

Անասնապահ թափառականները ապրում եյին
նույնպէս սերունդներով և սերնդական արյու-
նակցական կապը նրանց մեջ ամենասերտն ու
գլխավորն էր: Միայն նրանց սերունդները շատ
ավելի բազմամարդ եյին, քան վորսորդական
փոքրիկ սերունդը: Ընտելացած տավարը տալիս
էր մարդկանց կաթ և միս, վորով նրանք ընդ-
հանրապէս ավելի կուշտ եյին լինում: Վորսորդ-
ների մոտ պատահում էր, վոր փոքր չերեխանե-
րից շատ շատերը մեռնում եյին յերբեմն ջաղցից,
չերբեմն վատ, իրենց անմարսելի սննդից: Մինչ-
դեռ անասնապահների մոտ յերեխաները միան-
գամայն ապահովված եյին. կաթնային սննդով
եյին ապրում և աճում, հասակավորներն ել հա-
մեմատաբար ավելի քիչ եյին կոտորվում, այս
պատճառով ել սերնդներն ավելի բազմանդամ
եյին դառնում: Ամեն մի սերունդ պարունակում
էր իր մեջ պապին, հորը և սրա, հաճախ բազ-
մաթիւ, վորդիներին ու թոռներին: Ամեն մի այս-
պիսի սերնդի գլխին կանգնած էր լինում միժը.

հայրը կամ նահապետը, վորին ամբողջ բազմանդամ սերունդը հարգում էր, լսում և ականաժում։ Նահապետը, վորպես սերնդի մեծ՝ կառավարում էր տնտեսութիւնը։ Տավարի բազմանալով այս տնտեսութիւնը մեծանում և դժվար էր դառնում. պետք էր արածացնել տավարը, պետք էր պաշտպանել նրանց գիշատիչ գազաններից և պահպանել թշնամի հարևաններից, պետք էր ամեն ոք կթել կովերին, իր ժամանակին խուզել վոչխարներին, պետք էր սպանված տավարի կաշվից կաշի պատրաստել, խուզված բրդից թաղիք ձգել և այլն։

Նահապետը բաժանում էր այս հիշված և նմանորինակ աշխատանքները իր գերդաստանի բազմաթիվ անդամների մեջ, նա հանդիսանում էր տնտեսութեան կազմակերպողն ու գլուխը։

Յեթե տավարի հիվանդութիւններ չեյին տարածվում, յեթե գողութիւն և թալան տեղի չեյին ունենում, տնտեսութիւնը արագ մեծանում էր և այնպեսի չափերի հասնում, վոր միանդամայն անժանոթ եյին վորսորդներին։

Տնտեսութեան աճումով աճում էր նաև Նահապետի նշանակութիւնը։ Նա դարձավ իշխող սերնդում, դարձավ հրամայող. նրա կարգադրութիւնները կատարվում էյին առանց հակաճառութեան։ Ամեն մի ըմբոստ սաստիկ պատժվում էր։ Կինը, վորդիները, աղջիկները ու թոռները բոլորը

յեն թարկվում եյին նահապետին, այլապէս տնտե-
սությունը կքայքայվեր: Նահապետին լիովին յեն-
թարկվող գերդաստան անդամներէ մեջ մտնում
եյին նաև ստրուկները, այսինքն ստոր տոհմի
մարդիկ, վորոնք գերի եյին վերցված: Ստրուկ-
ները կանանց և տղաների հետ կատարում եյին
տավարի պահպանության և տնտեսության ամե-
նածանր աշխատանքները, իսկ հասակավոր առողջ
տղամարդիկ իրենց ավագների առաջնորդությամբ
հաճախ թողնում եյին իրենց արոտատեղիները և
ձի հեծած հարձակումներ գործում հարևան տոհ-
մների վրա. կողոպտում եյին նրանց, խլում եյին
նրանց արոտատեղերը, գերի եյին բերում պար-
տվածներին և այսպիսով ավելի մեծանում եր
հարստությունը, բազմացնում տավարի նախիր
ները և բանվորական ուժը: Արագ թաց ձիերի
շնորհիվ թափառաշրջիկ կեղեքիչները կարողա-
նում եյին հարձակում գործել վոչ միայն հարե-
վան թափառական տոհմների, այլ նույնիսկ հեռա-
վոր նստակյաց լերկրագործների, գյուղերի և
քաղաքների վրա. կարողանում եյին կողոպտել,
այրել և գերի վերցնել նրանց բնակիչներին:

Այսպիսի թափառականների մեջ պատերազ-
մական արշավանքներն ու կողոպուտը դարձավ
տղամարդկանց պարապմունքը: Մինչդեռ կա-
նայքն ու ստրուկները կրում եյին տնտեսության

ծանրութիւնը, տղամարդիկ, խիզախ ձիավոր-
ները, ազատ ամեն տեսակ աշխատանքից, պա-
րապուժ եյին կողոպուտով և առևտրով: Նրանք
առևտուր եյին անում կողոպտած իրերով, տա-
վարով, անասնապահական արդյունաբերութիւն-
ներով և գլխավորապես ստրուկներով. զիջելով
նրանց փողով այն ժողովուրդներին, վորոնց ան-
կարող եյին թալանել:

Իհարկե, վոչ բոլոր թափառական տոհմերն
եյին կարողանում հարստանալ և ուժ հավաքել.
դրանցից շատերը իրենք բռնության և կողոպու-
տի զոհ եյին դառնում: Զորեղ տոհմերը վոչ
միշտ խաղաղ եյին ապրում իրենց թույլ հարեան,
և նույնիսկ ազգական, տոհմերի հետ, ընդհակա-
ռակը, ուժեղ տոհմը ցանկանում եր ավելի ուժե-
ղանալ ի հաշիվ թուլի, այս պատճառով ել դաշ-
տավայրերում ել տեղի ունեցավ յերկարատև և
անողորմ կռիվ: Շուրջ քսան տարի Տիմուչինի
տոհմը XII-րդ դարու վերջերին կռվեց մյուս
տոհմերի հետ. նա իր զորքերով անցավ ընդար-
ձակ դաշտավայրը ամեն ուղղությամբ և տիրեց
տոհմերին մեկը մյուսիցհետո: Նա շատ խստու-
թյամբ պատժում եր պարտված հակառակորդնե-
րին, նրա հրամանով քսանից ավելի գերված խաներ
կենդանի յեփվեցան կաթսաների մեջ: Վերջա-
պես Տիմուչինը մոնղոլական բազմաթիվ տոհ-

մերի միահեծան պետը դարձավ: Հարյուր հազարավոր մարդիկ հնազանդվեցին նրան և առանց հակաճառության կատարուած ելին նրա հրամանները: Մինչ այդ բաժան-բաժան յեղած, հետևապես և թուլացած թափառաշրջիկ տոհմերը դարձան Տիմուշինի իշխանությամբ մի սոսկալի ուժ: Նա հանդիսավոր կերպով հայտարարեց իրեն «Զինգիգ խան», այսինքն — մեծ խան: Սակայն Զինգիգ խանին քիչ եր թվում տարած հաղթութիւնները. Ասիայում դեռևս, մնում եր անկախ մի մեծ պետութիւն — Զինաստանը:

Մինչև Զինգիգ խանը, մոնղոլները յերբեմնապես ավազակային հարձակումներ ելին գործում չինական սահմանների վրա: Բայց նրանց մտքովրն անգամ չեր անցնում բաց կովի բռնվել Զինաստանի հետ: Ինչ չելին համարձակվում անել առանձին տոհմերը, արին Զինգիգ խանի գորբերը:

Նա հավաքեց մի ահագին զորախումբ և գնաց պատերազմելու չինացիների դեմ: Ինչպես վոր մորեխը վոչնչացնում եր իր ճանապարհի վրա գտնված ամբողջ բուսականութիւնը, այդպես վոչնչացրին մոնղոլներն ամեն ինչ, վոր պատահում եր ճանապարհին: Կողոպտում և վառում ելին գյուղերը, սպանում ելին բնակիչներին:

Մոտեցան Զինաստանի մայրաքաղաք Պեկի-

նին. լերկարատիվ պաշարումից հետո քաղաքն
առնվեց և այրվեց: Չինական կալսության մե-
ծագույն մասը յենթարկվեց Չինգիզ խանին:
Այժմ արդեն ամբողջ Ասիայում չկար մի վորեն
ժողովուրդ վոր կարողանար դիմադրել ամե-
նահզոր աշխարհակալին:

Այսպես առաջացավ ասիական դաշտավայրում
մոնղոլական զորեղ պետութունը: Սակայն սրա-
նից չփոխվեց մոնղոլների կյանքի յեղանակը.
նրանք առաջվա նման թափառում ելին դաշտա-
վայրում իրենց հոտերով, առաջվա նման ապ-
րում ելին առանձին տոհմերով, սակայն արյան
կապից զատ բոլոր մոնղոլներին միացնում եր
մի նոր կապ — պետականը: Այս նոր կապը սկզ-
բում բաժան-բաժան յեղած տոհմերին դարձրեց
մի ժողովուրդ և տվեց նրան մի չտեսնված ուժ:
Բայց Չինգիզ խանի մահից հետո նրա ահագին
պետութունը բաժանվեց միջանի մասերի:

Չինգիզ խանից շատ առաջ, V-րդ դարի կեսում
գոյություն ունեւ հոնների թափառող ժողո-
վուրդը: Այս տոհմերից մինի առաջնորդը Ատիլ-
լան, Չինգիզխանի նման իր տիրած թափառա-
շրջիկներից կազմեց մի զորեղ պետութուն: Հոն-
ները թափառում ելին Դունայ, Վոլգա, և Դոն
գետերի դաշտավայրերում և սարսափ ելին ձգում
ամբողջ Յեվրոպայի վրա:

Ատիլլան իր անսովոր խստության համար կոչ-
վեց «աստվածային խարազան»: Սակայն հոն-
ների հզորությունը տևեց մինչև Ատիլլայի մահը:
Նվաճողի մահից հետո, նրա պետությունը ընկավ:
Այդպիսի վիճակի յենթարկվեց նաև այն պետու-
թյունը, վորը հիմնվեց XIV-րդ դարում Լենգթե-
մուր ասիական ահեղ աշխարհակալը:

Թափառականներին ընդհանրապես չերբեք չի
հաջողվել յերկարատև պետություն կազմել: Յեր-
բեմնապես մի վորևե պատերազմասեր իշխան,
Ատիլլայի կամ Չինգիզ խանի նման, միացնում
եր առանձնացած տոհմերը և տիրում հարևան
ու հեռավոր յերկրներին. այսպիսի նվաճողների
նպատակը յեղել է թալանն ու նոր արոտատե-
ղիների տիրապետությունը. սակայն, այսպիսի
միացումը յերկար չի տևել, հաճախ լուծվել է
նվաճողի կամ նրա հաջորդների մահից հետո:

6 ԱՌԱՆՑ ՑԱՆՔՍԻ

Վաղ առավոտից թափառում են անտառում
նախնական մարդիկ—մի ծերունի, յերկու կին և
յերեք յերեխաներ՝ հինգ-վեց տարեկան: Ծերու-
նու և կանանց վրա կան տերևներից գոգնոցներ,
յերեխաները մերկ են: Այս մարդիկ հոգնել են
և քաղցել: Սրանց հետ ապրող յերկու ուժեղ
տղամարդիկ դեռ յերեկ ուղևորվել էին վորսի,

բայց չեն վերադարձել: Սակայն այնպէս ուզում
են ուտել: Ահա յերկու կանայք յերեխաների և
ծերունու հետ գնացին վորոնելու ճաշակելի հա-
տիկներ և արմատներ: Նրանք հաճախ իրենց
քաղցը հագեցրել էին այդպիսի ուտեստով: Գա-
զաններ վորսալու համար նրանք լնչ ուժ ունեն
և վոչ ել գենք:—Այդ չափահաս և ուժեղ տղա-
մարդկանց գործն է: Բայց նրանց ել միշտ չի հա-
ջողվում ձեռք բերել մսեղեն կերակուր:

Այս մարդիկը դուրս յեկան մեծ մարգագետին
և սկսեցին վորոնումներ կատարել: Կանանցից
մինն ուշադրությամբ նայեց շուրջը: Այդ տեղը
նրան ծանոթ թվաց: Նա անցյալում միքանի ան-
գամ լեղել էր այդտեղ և գտել էր բույսեր՝ ցո-
ղունների վրա հասկերով: Իսկ հասկերի մեջ յե-
ղել էին շատ համեղ հատիկներ:

Նա վերջին անգամ մի տեղում գտել էր այս-
պիսի շատ բույսեր՝ և նույնիսկ քաղհանել էր
նրանց շուրջ յեղած անպետք խոտերը, վորպես-
զի յերեխաները կարողանային իրենք իրենց հա-
վաքել հատիկները: Նրանք այն ժամանակ քաղել
էին բոլոր հասկերը և լիովին կերակրվել: Ուստի
կինը մտածում էր, թե չանցնի՞ հին տեղը, գուցե
վորևե բան ելի դռնվի:

Կինը շուտով գտավ ծանոթ մարգագետինը:
Յեւ դժվար ել չեր գտնելը. նրա շուրջը բուսել

եյին խիտ անպետք խոտեր. մարգագետնում այս-
պիսի խոտեր քիչ կային, մեծ մասը ծածկված
եր բարձր ցողուններով, վորոնց վրա կային յեր-
կար հասկեր: Այս վայրի ցորեն եր, ծողունները
վերջին անգամից շատ ավելի եյին: Յերբ մարդիկ
կերել եյին հատիկները, սրանց մի մասը թափ-
վել եր գետին և բուսել:

Այս մարդիկը հանդստացան և պատրաստվեցին
հեռանալ: Սակայն նախ քան հեռանալը, կանայք
բաղհանեցին մարգագետինն անպետք խոտերից:

Ահա այսպես մարդիկ առաջին անգամ աշխա-
տանք թափեցին գետնի վրա: Սկզբում նրանք
վերցնում եյին գետնից այն, ինչ վոր նա ինքն
իրեն բուսցնում եր, հետո նրանք սկսեցին բաղ-
հանել անպետք խոտերը, ոգնել գետնին բուսցնե-
լու ճարակելի բույսեր:

Մարդիկ նկատեցին, վոր ճարակելի բույսերից
մի քանիսը կարելի յե գտնել տարվա մի յեղա-
նակին, իսկ մյուսին՝ վոչ: Նրանք բաղհանում
եյին փոքրիկ մարգագետինները, վորոնց վրա վայ-
րի ձևով բուսնում եյին այդպիսի բույսեր, իսկ
իրենք գնում եյին թափառելու ուրիշ տեղեր:
Այսպիսի դաշտերի բաղհանով զբաղվում եյին
միայն կանայք: Տղամարդիկ միայն վորսորդու-
թյամբ եյին պարապում: Բայց յեթե չեյին հա-
ջողեցնում վորևե գաղան սպանել, նրանք ել

ատիպված եյին լինում կերակրվել հատիկներով
և բույսերի արմատներով:

Տարվա վորոշ ժամանակին մարդիկ վերադառ-
նում եյին վոչ թե պատահաժբ սնունդ գտնե-
լու, այլ հաստատապես գիտեյին, վոր այդտեղ
ուտեստ կա:

Զրույցի յեվ ցարագրության համար. — Ինչո՞ւ
հախնական մարդիկ քաղհանում եյին ցորենը: Կա-
րելի՞ք յե նրանց յերկրագործ անվանել:

7. ՅԱՆՔԱ ԱՌԱՆՑ ԱՐՈՐԻ ՅԵՎ ԳՈՒԹԱՆԻ

Հարավային Ամերիկայում այժմ ել կան բազ-
մաթիվ անապատներ: Հնագույն ժամանակնե-
րում դրանք ավելի շատ եյին: Առանձնապես
շատ անտառներ կային այն տեղում, ուր այժմ
գտնվում ե Պարագվայի փոքրիկ պետութիւնը:
Այս անտառներում թափառում եյին վայրենի
վորսորդներ: Սրանցից միքանիսն ապրում եյին
միայն վորսորդութեամբ, մյուսները, բացի վոր-
սորդութիւնից, գիտեյին աճեցնել ճաշակելի
բույսեր: Նրանք ցանում եյին քիչ քանակու-
թեամբ սիւնդր, վոր վայրի ձևով հիմա յել բուս-
նում ե Պարագվայում: Այս կողմերում, լեռնա-
յին մարգագետնի ծայրում կանգնած եր վայ-
րենիների դագան: Այս բնակարանը տեսքով

նման եր այն դագաներին, վորոնք ալժմ ել շին-
վում են բանջարանոցներում:

Մի անգամ առավոտյան դագայի բնակիչ վայ-
րենին ուղևորվեց վորսի: Պետք եր կերակուր
ճարել: Այն կուգվարը (пума — Ամերիկայի կատ-
վառյուծ), վորին յերեք որ առաջ նա սպանել
եր, ամբողջովին կերված եր. մինչև անգամ վոս.
կրներից ծուծն ել ծծել եյին:

Գնաց վորսորդը. իսկ տանը մնաց կինը յեր-
կու փոքրահասակ յերեխաների հետ: Ամուսնուն
սպասելով՝ կինը նստել եր դագայի դռան առջև
և քարին քսելով սրում եր փայտատի նման կեռ
ձողը: Փոքրիկ, ծծկեր յերեխան պառկած եր
մորից փոքր ինչ հեռու խոտե անկողնու վրա.
մյուս տղան, վոր վեց տարեկան եր, ճվճվալով
վազում եր մարգագետնում թիթեռների յետևից:

Մոտենում եր կեսօրը: Կինն շտապով նայեց
արևին և իր ուշադիր հայացքը ձգեց անտառի
լեզրին: Հետո վայր դրեց փայտատը և չոքած
սողաց դագայի մեջ: Շուտով նա կրկին յերևաց
դռան առջև: Նրա ձեռքում կային սիմինդրի
արմատներ՝ դեղնավուն, փայլուն հատիկներով:

Կինը վերցրեց յերեխային գետնից և գնաց
մարգագետնի հանդիպակաց կողմը: Այնտեղ գլտ-
նվում եր մի փոքրիկ հրապարակ, վոր մաքրված
եր խոտ ու քոլից: Նկատելի յեր, վոր այս կա-

տարված եր մարդու ձեռքերով: Կինը յերեխա-
յին ամրացրեց իր մեջքին և սկսեց փորելով
փափկացնել հողը:

Յերկար աշխատեց կինը, մինչև վոր փորեց-
վերջացրեց գետինը: Վերջապես աշխատանքն
ավարտվեց: Սրբեցնա իր քրտնած յերեսը, փոքր
ինչ հանգստացավ և հետո նորից սկսեց աշխա-
տել: Կճպեց սիմինդրի արմատները, հատիկները
ցրվեց փորած հողի մեջ և սկսեց ձեռքերով և
փայտատով ծածկել սերմը: Տղան ել այդտեղ եր
և ոգնում եր մորը հողի կոշտերը փշրելու: Յերբ
կինը վերջացրեց աշխատանքը և վերադարձավ
դագան, այնտեղ արդեն նստած եր նրա ամու-
սինը՝ հոգնած և քաղցած:


Տղամարդը վերադարձել եր տուն ձեռնունայն:
Խեղճն ամբողջ ուրը թափառել եր անտառում մի-
անգամայն իզուր. գոնե մի փոքրիկ գազան սպա-
նած լիներ. այն ել չեր յերևացել: Այդ ժամա-
նակ կինը դրեց յերեխային գետնին, բերեց դա-
գայից նույնպես յերկու կապուկ սիմինդր և
սկսեց կճպել, վորպեսզի ամուսնու համար կերա-
կուր պատրաստի: Բայց մարդու հաժքերու թյունը
հատել եր: Նա վերցրեց սիմինդրի մի արմատ
և մի վայրկյանում լցրեց բերանը միջանի հա-
րյուր հատիկ: Սկսեցին գործել վայրենու ամուր
ծնոտները, կրճկրճում եյին ատամները:

Կինը լցրեց հատիկները լալն, տափակ քարի վրա և մի ուրիշ ավելի փոքր քարով սկսեց աղալ նրանց: Բայց ամուսինը չհամբերեց, վոր նա աղա հատիկները: Նա արդեն կերել վերջացրել էր իր վերցրածը, ուստի քաշեց բուռը քարի վրայից խոշոր աղացված հատիկները և կերավ մինչև վերջին կուտը: Տղան տեսնելով, վոր հայրն ագահությամբ ուտում է, ինքն ել խնդրեց ուտելու: Մայրը պատրաստեց փոքր ինչ ձավար (крына), ինքը կերավ և տվեց տղային ել ուտելու:

Արեգակն արդեն վաղուց թագ եր կացել խիտ անտառի յետևում, և խավարը պատում եր մարգագետինը: Ընտանիքը սկսեց քնելու պատրաստվել: Այդ որը մի կերպ ապրեցին. թեև վորսորդության մեջ հաջողություն չունեցան, սակայն սիմինդրը նրանց սովից փրկեց: Իսկ վաղը գուցե վորսորդությունը հաջող լինի, և արժանանան միս ուտելու: Իսկ լեթե մսի չարժանանան, կինը սիմինդրի փոքրիկ պաշար ունի: Կարելի չե ապրել:

Վատ գործիք է կեռ ձողը—փայտատը, նրանով շատ բան չես շինի, բայց և այնպես ձեռքերին մեծ ոգնություն է: Հազարավոր տարիներ առաջ մարդիկ այս փայտատի մասին ել գաղափար չունեին: Նախնական մարդկանց գործիքները միայն մի զույգ ձեռքեր էին: Մատներով և

յեղունգներով եյին նրանք փորում հողը, վոր-



Նկար 5. Յերկրագործական
նախնական գործիքներ.


ծիքները.

պեսզի իրենց համար ու-
տեստ ճարեն, ինչպես՝
արմատներ, միջատների
և ճիճուների թրթուր-
ներ: Յեվ յերկար ժամա-
նակ այսպես եյին ապ-
րում: Հետո ձեռներին
ոգնելուն պատակով մար-
դիկ սկսեցին ձող գոր-
ծածել: Այն ժամանակվա
մարդկանց համար ձողը
շատ ավելի նշանակու-
թյուն ուներ, քան մեզ
համար դանակն ու կա-
ցինը: Ձեռքով չի կարե-
լի այնպես փորել հողը,
ինչպես ամուր ձողով,
մանավանդ յերբ նա սուր
ծայր ունի:

Աստիճանաբար, յեր-
կար տարիների ընթաց-
քում, զանազան տեղե-
րում մարդիկ մտածեցին
բարելավել իրենց գոր-

Առաջին յերկրագործները յեղել են կանայք։
Տղամարդ վայրենին արհամարհում եր յերկրա-
գործական աշխատանքը։ Նա իր գործը համա-
րում եր վորսորդութունը և վոչ թե բույսեր
ցանելու չարչարանքը։ Յեվ կանայք, առաջին
յերկրագործները, բավականանում եին փայտե
կեռ ձողով՝ հողը մշակելու համար։ Սակայն հե-
տագայում տղամարդիկ ել սկսեցին կանանց հետ
միասին փորել հողը և հացահատիկ ցանել, վո-
րովհետև վորսորդությամբ չեր կարելի ամեն
տեղ ապրել։

Ձեռնարկելով յերկրագործության՝ տղամարդը
կնոջից ավելի հեշտությամբ կարողացավ մտա-
ծել բարելավել գործիքները՝ հողը փափկացնելու



Նկար 6. Նախապատմական մարդու մանգաղը

համար։ Չե՞ վոր տղամարդիկ վաղուց զբաղվում
եյին գործիքներ և զենքեր շինելով, ընտելացել
եյին թեև հասարակ, բայց շատ նշանավոր հնարք-
ների՝ կատարելագործելու դանակները, կացին-

ները, դրերը, նեւ ու աղեղները: Քարից և փայ-
տից զանազան բաներ շինելու վարժությունն
ոգնեց տղամարդուն և՛ այս նոր խնդրում, այս-
ինքն՝ հնարել հողը մշակելու գործիքներ: Յեւ
հիրաի, հասարակ փայտե ձողը փայտատը փոխա-
րինեց վոսկրե կամ քարե, իսկ հետո ել յերկաթե
ծայրով ձողի: Յերևացին արորն ու գութանը:

Զուլցի յեւ ցարագրութեան համար. — Ի՞նչու
յերկրագործությամբ նախ կանայք և ապա տղամար-
դիկ զբաղվեցին: Այժմ գյուղերում փայտատը ի՞նչի
համար ե գործածվում: Փորձեցեք նկարել այն: Ին-
չով ե տարբերվում նա նախնական փայտատից:

8. ՎԱՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԻՋՈՑՈՎ

Լայն, ջրառատ գետի ցածր ափերն են: Զուրը
մոտ ժամանակներս վողողել ե յերկու ափն ել,
և հողը ծածկված ե խոնավ տղմով: Այրող արե-
գակը կանգնած ե անաժապ յերկնքի վրա. անշարժ
ողն այնպես տաքացած ե, վոր դժվար ե շնչել:
Շոգը տանջում ե, սակայն մարդիկ այստեղ ըն-
տելացել են նրան: Նրանք փոքրիկ խմբերով տա-
րածվել են գետի յերկու կողմերում և առաջ ու
յետ են վազում:

Ահա ափին մոտիկ վեց մարդ սաստիկ աշխա-
տում են տղմի մեջ: Սրանցից չորսը լծված են
յերկու յերկու և քաշում են գութանի նման մի

ինչպիսի փայտե ծանր գործիք: Մի մարդ գնում
է յետևից և յերկու ձեռքով հենվում գութանի
վրա, վորպեսզի նա գետնից դուրս չթռչի: Վեցե-
րորդը գնում է սրա կողքից և շաղ է տալիս
սերմեր: Մարդիկ հոգնած և քրտնած դեմքեր ու-
նեն, մանավանդ նրանք, վորոնք քաշում են գու-
թան: Նրանց մեջքերը կռացած են, ջղերը լար-
ված, վոտները մինչև կռճերը խրված են տղմի մեջ:

Ժամանակ առ ժամանակ մեկ կամ մյուսը բար-
ձրացնում է ձեռքը, արագությամբ սրբում ճա-
կատը և նորից բռնում ձողը: Քրտինքը լցվում
է աչքերը, խանգարում է տեսնելու, իսկ կանգ-
նել չի կարելի: Գութանի յետևից գնացողը բղա-
վում է լծվածների վրա, շտապեցնում է նրանց:
Այս մարդիկ աշխատում են համարյա մերկ: Նրանց
ամբողջ հանդերձը մեջքը փաթաթված մի կտոր է:

Սրանք հին լեգիպտացիներն են, Նրանք ապ-
րում ենին Աֆրիկայում Նեղոս գետի ափերին
Քրիստոսի ծննդից միքանի հազար տարի առաջ:
Արդեն այդ հեռավոր ժամանակներումն էլ յե-
գիպտացիները նստակյաց ժողովուրդ ենին և յեր-
կրագործությամբ ենին պարապում: XIX դարի
կեսին գիտնականները մի բուրգի (այսպես ենին
կոչվում յեգիպտական թագավորների դամբան-
ները) մեջ գտան ցորենի հատիկներ, վոր նման
ենին այժմյանին: Այս բուրգը շինված էր մոտ

հինգ ու կես հազար տարի մեզանից առաջ: Յեւ
միայն յերկրագործությամբ կարող ելին յեգիպ-
տացիները հալթալթել իրենց սնունդը: Վորսոր-
դություն անելու տեղ չկար. նրանց յերկիրը գուրկ
ե անտառներից և շրջապատված ե տաք, ավազոտ
անապատով: Միայն հողի նեղ շերտերը նեղոսի յեր-
կարությամբ հարմար են հացահատիկներ ցանելու:

Սկզբում յեգիպտացիներն, ինչպես և թափա-
ռական վորսորդները, բացի փայտատից, ուրիշ
յերկրագործական գործիք չունեյին: Նրանք մշա-
կում ելին հողը այնպես, ինչպես վորսորդի կինը
մշակում եր իր սիմինդրի դաշտը: Այսպես ան-
ցան հարյուրավոր, հազարավոր տարիներ: Բնակ-
չությունն ավելացավ. հաց ավելի և ավելի յեր
հարկավոր, իսկ փայտատով շատ տեղ չես մշա-
կի: Կարիքն ստիպեց մարդկանց մտածել բարե-
փոխել փայտատը:

Նրանք շինեցին մեծ փայտատ, հարմարեցրին
նրա վրա ամուր ձող և կոթ, ստացվեց գութանին
կամ արորին նման մի բան: Այժմ արդեն փոխա-
նակ հողը փայտատով փորելու, սկսեցին գու-
թանով ակոսներ բանալ: Բայց այս մի մարդու
ուժից շատ բարձր եր. ինչպես անել: Մտածե-
ցին գութանին միջանի մարդ լծել: Շատ ծանր
աշխատանք եր այս, բայց և այնպես շատ ավելի
գործ եր շինում, քան փայտատով:

Հինգ կամ վեց մարդ գութանով վարուած ելին շատ ավելի հող, քան ձեռքի փայտատով, և վարն ել հավասար, միևնույն խորությանն եր լինում: Իսկ այս մեծ նշանակութիւն ունի հացահատիկ. ների մշակության համար. հավասարաչափ փորված դաշտուած ցանված սերմերը ծածկվում են հողի հավասարաչափ շերտով և միաժամանակ ծլում և հասնում են: Այսպիսի վարի միջոցին ավելի քիչ սերմ ե կորչում, և բերքը ավելի լավ ե լինում:

Յերկար ժամանակ վարուած ելին մարդկանց միջոցով: Գութանը քաշելը ծանր եր և տանջալից: Այս պատճառով ել ստիպում եյին ստրուկներին վարելու: Իսկ այդ ժամանակներում մարդիկ հաճախ պատերազմում եյին և շատ գերիներ վերցնում, վորոնց ծախում եյին իբրև ստրուկներ: Ստրուկներն անասուններից ավելի եժան եյին: Հարուստ մարդիկ գնում եյին շատ ստրուկներ, նրանց համար հիմնում ամբողջ գյուղեր և մեծ գյուղատնտեսությամբ պարապում:

Սակայն աշխարհումս ամեն ինչ ժամանակավոր ե, ամեն ինչ փոփոխվում ե: Վերջերս հասավ նաև մարդկանց միջոցով վար անելու ժամանակը:

Զրույցի տարագրության համար.—Կարո՞ղ եյին քոչվոր-անասնապահներն ապրել Նեղոսի հովտում: Ինչո՞ւ յեգիպտացիները հին ժամանակներում պարտավորված եյին յերկրագործությամբ պարապելու:

9. ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՎ ՎԱՐԵԼԸ.

Հայտնի չե, թե վոր լերկրում և ով ե առաջինը հնարել վարելու նոր միջոցը: Կարելի չե միայն մակաբերել, թե ինչպես ե լերկել: Դուք արդեն գիտեք, վոր շատ լերկրներում մարդիկ անասնապահությունից լերկրագործության եյին անցնում, լերք արոտատեղիները չեյին բավականացնում: Յեվ ահա մարդկանց գլխում միտք ծագեց՝ թե քանի վոր ձին կամ յեզը տեղափոխում ե մարդուն տեղից տեղ իր մեջքի վրա, ինչո՞ւ կարելի չպիտի լինի հարկադրել նրան քաշել արորը:

Հասավ վարի ժամանակը: Մարդիկ դուրս լեկան դաշտ արորներով և տարան իրենց հետ մի քանի յեզ: Թուկեր կապեցին արորին և մի կերպ լծեցին մի ուժեղ լեզ: Մի մարդ բռնեց արորի մաճը, լերկուսը կանգնեցին կողքերին և բռնեցին յեզի յեղջյուլներին կապած թուկերից: «Դեհ, քաշիր»: Նախ լեզը շարժվեց առաջ, հետո մի կողմ, նորից առաջ. միայն հողի կոշտերն եյին թռչում: Արորը ճըրճըրթում և ճռռում եր կամ խորը խրվում հողի մեջ, կամ դուրս թռչում: Մարդիկ աշխատում եյին պահել յեզին. բայց սա դեհ ե շարտում նրանց և փախչում արորի հետ և կոտորատում այն: Դաշտում մեաց կարճ կարճ կըտրատված և անհավասար ալոս:

Սակայն վորպես սկզբնավորություն՝ այդպիսի

ակոսն ել գոհացուցիչ եր: Մարդիկ հասկացան,
վոր սրանից բան դուրս կգա, միայն հարկավոր
ե հետզհետե վարժեցնել կենդանուն իրեն համար
այս անսովոր աշխատանքին:

Միառժամանակ անցավ: Այն միևնույն դաշ-
տում, ուր առաջին անգամ փորձեցին վարել լե-
զով, առաջ ու յետ եյին շարժվում արորները,
ճեղքելով լերկար և ուղիղ ակոսները: Իսկ լծված
եյին վոչ թե մարդիկ, այլ հնազանդ յեզներ: Մար-
դիկ միայն կառավարում եյին արորները և հոռովել
կանչում իրենց ոգնական-կենդանիներին խրա-
խուսելով: Ժամանակով սկսեցին ձիերով ել վար
անել: Շատ հեշտացավ յերկրագործի աշխատան-
քը: Յեվ հասկանալի յե: Վորքան ել մարդն ու-
ժեզ լիներ, չեր կարող հասնել ձիու կամ լեզան
ուժին: Ձին, որինակ, ութ անգամ ուժեղ ե մար-
դուց, իսկ յեզը՝ ել ավելի: Յեվ անա ամենածանր
և հոգնեցուցիչ աշխատանքը մարդկանց փոխարեն
կենդանիներն սկսեցին կատարել: Բացի այն, վոր
կատարում եյին, այլև մի ձին ութ մարդու գործ
եր շինում: Մարդիկ կարողեյին յերկու-լերեք
անգամ ավելացնել վարը: Այսպիսով նրանք ապա-
հովացրին իրենց հացով, և ավելի ազատ միջոց
ունեցան ուրիշ զբաղմունքների համար:

Վորսորդը կերակրվում եր վորսով: Նա մշտա-
կան կռիվ եր մղում վալրի կենդանիների հետ
և ստանում եր այն, ինչ վոր կարելի յիւր լինում

խել: Քոչվորն ընտելացրեց կենդանիներին և
ապրում եր իր հոտերի շնորհիվ: Նա թամբում
եր իր կենդանիներին և տեղափոխում նրանցով
իր ձեռք բերած բեռները:

Բայց քոչել կարելի չե միայն դաշտերում, և
քոչվորը վերցնում եր դաշտից այն, ինչ վոր նա
տալիս եր նրան և նրա հոտերին: Յերկրագործը
լծեց կենդանիներին արորին և նրանց ոգնու-
թյամբ հարկադրեց յերկրին տալ այն, ինչ վոր
իրեն հարկավոր եր՝ ապրուստի համար: Գազան-
ների. վորսորդը և անասնապահ. քոչվորը վերցնում
եյին՝ ինչ վոր պատրաստի գտնվում եր յերկրի
վրա. յերկրագործը լծեց կենդանիներին արորին
և նրանց ոգնությամբ սկսեց հանել յերկրից ան-
հրաժեշտ ուտեստը:

Ջրույցի յեվ ցարադրուքյան համար. — Ձեր տե-
ղում ի՞նչ կենդանիներով են վարում: Ել ի՞նչ կենդա-
նիներով են վարում Հայաստանում: Քանի՞ մարդկանց
ուժը կտար վարել ձեռքի արորով. Վորսորդները ու-
նեն ընտանի կենդանիներ: Քոչվորներն ունեն աշխա-
տող կենդանիներ:

10. ՅԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒ ԹՅՈՒՆԸ

Յերեխան շուտով սովորում ե քայլել և ան-
նկատելի կերպով դառնում ե յերիտասարդ. յերի-
տասարդը շուտով տղամարդ ե դառնում: Մարդ-

կությունն ել անցնում ե սկզբնական մանկու-
թյունը, յերիտասարդությունը և առնությունը:
Բայց մի հասակից մյուսն անցնելու համար
մարդկությանը հարկավոր ե վոչ թե տասնյակ,
այլ հարյուր, հազար տարիներ: Ասիայում ոռոս-
քոչվորներին — կիրգիզներին և յակուտներին դժ-
վար չեր յերկրագործություն սովորել. նրանց
կողքին Յեվրոպական Ռուսաստանից գաղթած-
ները վարում են յերկիրը, իսկ նախնական մար-
դիկ վոչ վոքից չեցին կարող սովորել. նրանք
պարտավոր եյին ամեն բանի իրենց խելքով
հասնել:

Շատ դարեր անցան, մինչև վոր նրանք հաս-
կացան, վոր իրենք կարող են բուսցնել զանա,
զան բույսեր: Տնկեցեք գետնի մեջ կաղին, և
յերկու-յերեք դար հետո այդ տեղում կբարձրա-
նա հսկա, սաղարթախիտ կաղնի: Ճիշտ այսպես ել
ժամանակի ընթացքում ծագեց և ծավալվեց
յերկրագործությունը: Մարդիկ հետզհետե կա-
տարելագործեցին գործիքները և յերբ հնարեցին
արորը, սկսեցին ցանել հացահատիկներ:

Անցան հազարավոր տարիներ, և վայրենիներ
ի փոքրիկ արտերը, վոր մի կերպ վարված ե-
յին փայտատներով, դարձան ընդարձակ արտեր՝
զանազան հացահատիկներ ցանված: Սկզբում
յերկրագործությունը ծառայում եր միայն վոր-

Այն աժանդակութիւնն թափառաշրջիկ վորսորդի
կամ քոչվորի աղքատ տնտեսութեան մեջ: Այժմ
նա կերակրում ե միլիոնավոր մարդիկ: Շատ
տեղերում յերկրագործութիւնը դարձել ե մարդ-
կանց գլխավոր պարապմունքը: Յերկիրը կերա-
կրում և հագցնում ե նրանց: Յե՛վ միայն յերկրա-
գործ ժողովուրդներին հաջողվեց ապահովել ի-
րենց կերակրով, լինել հարուստ և կրթված:
Նրանք շատ առաջադիմեցին թափառական վոր-
սորդներին և քոչվորներին:

Սակայն նախնական մարդկանց կյանքը վո՛չ
ամեն տեղ միատեսակ զարգացավ: Մի տեղ
նրանք սկսեցին նախ յերկրագործութեամբ պա-
րապել, մի ուրիշ տեղ՝ անասնապահութեամբ:
Միքանի ժողովուրդներ մնացին վորպէս անաս-
նապահ-քոչվորներ, մյուսները միացրին անաս-
նապահութիւնը յերկրագործութեան հետ, դար-
ձան նստակյաց:

Կային այնպիսի ժողովուրդներ ել, վորոնք
չեյին սովորել վոչ յերկրագործութիւն և վոչ ել
անասնապահութիւն: Այս ժողովուրդները հիմա
յե՛լ շատ քիչ բանով են տարբերվում նախնա-
կան մարդկանցից: Աֆրիկայի և Ավստրալիայի
վայրենիները կարողացել են ընտելացնել միայն
շանը: Ընտանի ուրիշ կենդանիներ չունեն:

Ահա թե ինչպես յերկրագործները գոյություն ունեն այժմ:

Հարավային Ամերիկայի անառներում վայրենիները դաշտերը քաղհան են անում, փափկացնում են հողը սրածայր փայտերով և նույնիսկ սպանած կենդանիների ճիւղաններով և տնկում են զանազան բույսերի արմատներ կամ շյուղեր: Աֆրիկայում արորի տեղ գործ են անում վոստոտ ճյուղեր, իսկ Մեծ Ովկիանոսի միջանի կղզիներում վայրենիները փորում եյին հողը լեզների յեղջյուրներով:

Այս բոլոր ժողովուրդների մեջ, հողը վարում են կանայք: Տղամարդիկ, ինչպես այս կատարվել է բոլոր նախնական մարդկանց մեջ, իմացել են միայն վորսորդություն և ձկնորսություն: Այս որինակներով կարելի չէ դատել, թե ինչպես է լեղել յերկրագործությունը հեռավոր ժամանակներում:

11. Ս Ե Ր ՈՒ Ն Դ

Շատ ու շատ դարեր առաջ, յերբ մարդկությունը նոր էր առաջացել, մարդիկ ապրում էին փոքրիկ խմբերով: 20 – 50 տղամարդ և կին, վորոնք հավատում էին, թե առաջացել են միևնույն նախահորից, կազմում էին մի սերունդ: Սրանք պաշտում էին մի վորևե կենդանի, վո-

րից իրենք առաջացած եյին համարում իրենց։ Այս կենդանին այդ սերնդի համար կոչվում եր նախահայր՝ տոտեմ։ Նրանք պաշտելով այդ կենդանու ամբողջ ցեղը՝ վոչ մի փասս չեյին պատճառում նրանց, չեյին սպանում և վոչ ել ուտում նրանց միսը։ Միայն տարին մի անգամ վորոշ հանդիսավորությամբ մորթում եյին նրանցից մինին և բաժանում սերնդի բոլոր անդամների մեջ. այսպիսով նրանք հաղորդվում եյին իրենց աստվածության հետ։

Նրանք բռնում եյին յերկրի մի վորոշ տեղ, վոր պատկանում եր ամբողջ սերնդին։ Անհատական սեփականությունն չկար նրանց մեջ. ամեն ինչ պատկանում եր բոլորին։ Աշխատանքներն ել տարվում եյին խմբովին, միասին եյին գնում վորս անելու, ձուկ վորսալու, պտուղներ հավաքելու. փոխադարձ ոգնությունը նրանց մեջ սովորական եր։ Յերբ կամենում եյին իրենց տեղը փոխել և կամ վորևե թշնամու վրա հարձակվել, հավաքվում եյին, միասին խորհրդակցում և իրենց միջից մինին առաջնորդ ընտրում։ Այս ընտրած առաջնորդը յեզան կամ խոյի յեղջյուրներ եր կապում ճակատին, վոր ցույց տա, թե ինքը ուժի, իշխանության տեր ե, առաջնորդ ե։

Յերբ մի սերունդ բազմանում եր, մի մասը տեղափոխվում եր միջիչ հեռու, պահպանելով

մփներքին կոմմունիստական կյանքը, իսկ առաջին սերնդի հետ բարեկամական հարաբերություն: Այսպես մեկը մյուսից առաջանում եյին նորանոր սերունդներ, վորոնց խումբը կոչվում եր տոհմ: Միևնույն ձևով կազմվում եյին շատ տոհմեր: Տոհմերի խումբը կոչվում եր ազգ: Յերբ ծագում եյին բոլոր խմբերին վերաբերող ընդհանուր խնդիրներ, ինչպես, որինակ, մի ընդհանուր թշնամու հարձակում, սերունդների առաջնորդները համախմբվում եյին, խորհչդա կցում և իրենց միջից ընտրում մինին, վոր հանդիսանում եր բոլոր սերունդների, այսինքն՝ ամբողջ տոհմի առաջնորդ: Նույն ձևով ել տոհմերի առաջնորդները համախմբվում եյին և ընտրում իրենցից ամենագործողին վորպես բոլոր տոհմերի, ամբողջ ազգի առաջնորդ:

Յերբ մի սերունդ կամ տոհմ իր բնական վայրի դիրքի և բնության սեղանի առատության պատճառով աճում եր և զարգանում, հարձակվում եր մի ուրիշ սերնդի կամ տոհմի վրա, կոտորում բոլորին և հափշտակում նրանց ամբողջ ունեցվածքը: Բայց հետո, յերբ սկսեցին պարապել անասնապահությամբ և մանավանդ յերկրագործությամբ, դադարեցին պարտվածներին բոլորովին կոտորելուց, այլ խնայեցին նրանց, վորպեսզի ծառայեցնեն և ոգտվեն նրանց աշխա-

տանքից: Այսպիսով առաջ յեկավ յերկու դասա-
կարգ՝ հաղթողներին և հաղթվածներին: Առաջինը
համարվեց տեր, վայելող, յերկրորդը՝ ստրուկ,
աշխատող: Առաջին դասակարգն եւ բաժանվեց
յերկու մասի՝ զինվորականներ, վոր զենքը ձե-
ռին պիտի պաշտպանելին յերկիրն արտաքին թըշ-
նամիներէց և կարգ, խաղաղություն պահպաներ
յերկրի մեջ: Մյուս մասը, կազմեց մտավորա-
կան կամ հոգևորական դասը, վոր սկսեց պա-
րապել կախարդութեամբ, հնարեց կրօն, վորոշ
կարգ և ծես և հետզհետե առաջ բերեց գիտու-
թյուններ:

Պարտված դասակարգն իբրև ստրուկ դատա-
պարտվեց հարատև աշխատանքի. տնային աշ-
խատանքներ կատարել, անասուններ պահել,
յերկիրը մշակել, հասարակական շինություններ
շինել: Այս խղճուկներն վոչ միայն իրենց աշխա-
տանքի արդյունքի մեծագույն մասն եյին տա-
լիս վայելող տերերին, ստանալով նրանցից մի
այն այնքան, վորքան վորպես մի յերկաթե ո-
րենք անհրաժեշտ եր գոյություն պահպանելու
և զավակներին կերակրելու, վորպեսզի իրենց
փոխարինեն, ալ և իրենց կյանքը: Վերջինս
կարող եր ազատ կերպով ծախել նրանց, փոխել
անասունների հետ և կամ սպանել իրենց ննջե-
ցալներին գերեզմանների վրա, վորպեսզի նրանց

հետ գնան մյուս աշխարհ, դարձյալ նրանց ծառայելու:

Իսկապես շատ ծանր եր ստրուկի դրությունը, սակայն հետզհետե, յերբ ավելի և ավելի ընտելացրին կենդանիներին, հնարեցին սալեր ու կառքեր, սովորեցին ոգտագործել քամին ու ջուրը՝ շինելով քամու ջրի աղացներ, ստրուկների աշխատանքը փոքր ինչ թեթևացավ: Այսպիսով սրանք շատ աշխատանքներից ազատվեցին և սկսեցին գլխավորապես լերկրագործությամբ պարապել: Բայց վորովհետև հողը և յերկրագործական գործիքներն ու անասունները տիրող դասակարգին եյին պատկանում, ուստի սրանք այնուամենայնիվ, նրանցից կախման դրության մեջ մնացին, մշակում ելին նրանց հողերը և արդյունքի մեծագույն մասը նրանց տալիս և դեռ զանազան ծառայություններ ել կատարում: Բացի դրանից, նրանք կապված եյին հողաբաժնի հետ և նրանից հեռանալու իրավունք չունեին: Այսպիսի ստրուկները կոչվում եյին ճորտեր: Յեվ լեթե վորևե տիրոջ կեղեքումներից հուսահատված ճորտը թողնում եր ամեն ինչ և փախչում, կառավարությունը վորոնում, գտնում եր նրան և վերադարձնում: Բայց յեթե նրան հաջողվում եր մի տարի և մի ուր թագնվել տիրոջից, բոլորովին ազատվում եր նրանից, վորովհետև

այսպիսով զրկվում են նաև իր հողաբաժնից, մնում
են նրան միևնույն ծանր պայմաններով մի ու-
րիշ հողատերի մոտ ճորտ դառնալ:

Մարդկության նախատինք բերող այս ճոր-
տությունը հետզհետե վերացավ: Այսպես՝ Ֆրան-
սիան առաջինը վերջ դրեց դրան XVIII դարի
վերջին: Գերմանիան XIX դարի կեսին, իսկ
Ռուսաստանը 1861 թվին: Սակայն այս ազա-
տությունով գյուղացիների դրությունը կատա-
րելապես չլավացավ, վորովհետև հողի մեծագույն
մասը դարձյալ մնաց կալվածատերերի ձեռքին
և շատ ու շատ գյուղացիներ՝ հող չունենալու
հետևանքով ստիպվեցին թողնել գյուղը և գնալ
քաղաք:

Տեսնենք թե ինչ վիճակի նա արժանացավ
այստեղ:

12. ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՅԵՎ ԱՐՈՏԱՏԵՂԻ ԴԱՐԱՎՈՐ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:

Առնվազն 12 դար Քրիստոսից առաջ Հայկա-
կան բարձրավանդակը կոչվում են Նայիրի: Սա
բաղկացած են բավականաչափ փոքր և մեծ պե-
տություններից, վորոնցից նշանավոր ենին՝ Ու-
րարտու, վոր բռնում են Արաքսի հովիտը, Բիա-
նա՝ Վանա լճի շրջակայքը—Տուսպա (Տոսպ) քա-
ղաքով, Մուսասիր՝ Արածանիի միջին ընթացքը

(այժմյան Մուշը), Միլիտոսա՝ Յեփրատի հովիտը (Մալաթիան) Միլդիշ՝ Արածանիի ակունքը (այժմյան Ալաշկերտը) և այլն:

Այս բոլոր յերկրներում բնակվում էր մի ժողովուրդ, վոր լերերի աստվածուհի Խալդին պաշտելու պատճառով խալդ էր կոչվում:

Այս ժողովուրդը Քրիստոսից 12 դար առաջ արդեն այնքան էր քաղաքակրթվել, վոր թափառական կյանքը թողել էր, գյուղեր ու քաղաքներ էր շինել և նստակյաց կյանք էր վարում: Ամեն մի պետութուն ուներ իր թագավորը և ազատ էր իր ներքին կառավարության մեջ, միայն վորոշ կախումն ուներ ավելի զորեղ թագավորից և արտաքին թշնամու հարձակման ժամանակ միանում էր բոլորի հետ՝ ընդհանուր ուժով դիմադրելու: Այսպես՝ յերբ XII-րդ դարում Նինվեյի թագավոր Թուկլատ-աբալ-ասար I (1130—1080) հարձակվել է Նախրիի վրա, այս յերկրի 30 թագավորները միացել են՝ ընդ դիմադրելու:

Խալդ ժողովրդի մեծագույն մասը գյուղացիութունն էր կազմում: Սա գլխավորապես լերակրագործութունով էր պարապում, վորին իբր ապացույց կարող են ծառայել այն բազմաթիվ ջրանցքները, վորոնց հետքերը մնացել են մինչև այսօր: Այսպես, որինակ, VIII-րդ դարում Մի-

նուսա թագավորի ժամանակ շինված և հենց այժմ ել գործող Շամիրամի ջրանցքը, վոր 80 կիլոմետր տարածություն և անցնում: Նշանավոր և նաև Ռուսաս Բ-ի ժամանակ շինված ջրանցքը, վոր Զանգուից ջուր վերցնելով անցնում և այժմվա Դալմա կոչվող լերկու մեծ տոններն երով և ջրում թե՛ Յերևանի այգիները և թե՛ Յերևանի և Եջմիածնի միջև գտնվող հողերը:

Նույնն են ապացուցում պեղումների ժամանակ գտնված յեզների կմախքներն ել, վորոնք այդ ժամանակներում պաշտվել են վորպես լերկրագործության աջակից և մեռնելուց հետո առանձին մեծ դամբարանում թաղվել՝ վոտների մոտ խնկամաններ ունենալով: Յերկրագործության հետ միաժամանակ գյուղացությունը պարպել և՛ աչգեգործությամբ, իսկ լեռնային տեղերում նաև անասնապահությամբ:

Նայիրիում բազմաթիվ քաղաքներ են յեղել, վորոնցից շատերն իրենց շուրջը խրամատներ և պարիսպներ են ունեցել, ինչպես նաև շատ շտեմարաններ՝ քարաժայռերի մեջ փորված, հատկապես վտանգի միջոցին թե՛ հացահատիկները և թե՛ գյուղացիների կյանքը թշնամիների հարձակումից պաշտպանելու: Քաղաքներում յեղել են լերկհարկ և յեռահարկ գեղեցիկ տներ, բաղանիսներ, պարտեզներ, բավականաչափ խանութներ:

Դեռ այժմ ել հիացմունք են պատճառում վանի
ժայռերի մեջ փորված պալատները, սենյակնե-
րը, գանձատները, շտեմարանները:

Քաղաքների բնակչությունը պարապում եր
գլխավորապես արհեստներով, առևտրով, այգե-
գործությամբ և գինեգործությամբ: Առանձնա-
պես ծաղկում եյին արհեստները, ինչպես ցույց
են տալիս պեղումների միջոցին գտնված բազմա-
թիվ զենքերը, զարդերը, ձիու սարքերը, կառքերը
և այլն:

Խալդերը բաժանված լինելով բազմաթիվ մանր
պետությունների, վորոնց մեջ պակասում եր
միությունը, քաղաքականապես թուլանում են:

VII դարում Քրիստոսից առաջ արիական ժո-
ղովրդի թրակիական մի հատված, վոր կոչվում
եր հայ, գլխավորապես պարապում եր վորսոր-
դությունով և անասնապահությամբ, քաջ եր և
պատերազմասեր: Ահա այդ ժողովուրդը Փայու-
գիայից Հալիս գետի ակունքներով յեկել մտել ե
Գայլ (Լիկոս) գետի հովիտը և այստեղ հիմնել
առաջին պետությունը, վոր հետո Փոքր Հայք ե
կոչվել: Այստեղից ել VI դարի սկզբին Յեփրա-
տի ակունքներով և Արաքսի հովտով մտել ե Արա-
րատյան դաշտը և տիրել խալդերին մինչև վանի
լիճը ներառյալ: Այսպիսով կազմվել ե յերկրորդ
պետությունը, վոր Մեծ Հայք ե կոչվել:

Այս հայերը կուլտուրապես ստոր լինելով խալ-
դերից, ընդունել են նրանց կուլտուրան և տա-
րածվելով նրանց հիմնած բազմաթիվ գյուղերում
և քաղաքներում, սկսել են նստակյաց կյանք վա-
րել և պարապել գլխավորապես յերկրագործու-
թյամբ, արհեստներով և առևտրով:

Այսպես, ուրեմն, անասնապահ, թափառական,
կիսակիրթ հայերս լեկել տիրապետել ենք յեր-
կրագործ, քաղաքակիրթ խալդերին և, ընդունե-
լով նրանց կուլտուրան, դարձել նստակյաց, յեր-
կրագործ և քաղաքակիրթ ժողովուրդ: Սակայն
հետո ևս ուրիշ անասնապահ, թափառական ժո-
ղովուրդներ, թե յերաշտների և թե արոտատե-
ղիների քչության պատճառով թափառելով-թա-
փառելով լեկել հարձակվել են հայերիս վրա:
Այսպես՝ թուրք-թաթարական ցեղը հնագույն
ժամանակներից ի վեր ապրելիս ե յեղել կաս-
պից ծովից դեպի արևելք, Միջին Ասիայում:
Այս ժողովուրդը պարապելիս ե յեղել խաշնա-
րածությամբ, այս պատճառով ել շարունակ տե-
ղափոխվել ե զանազան կողմեր իր հոտերով և
ընտանիքներով և թափառական կյանք վարել:
Ահա այս ժողովրդից մի հատված, վոր իր առաջ-
նորդ Սելջուկի անունով կոչվել ե սելջուկյան
թուրքեր, XI դարի կիսին (1048 թ.) մտել ե

Հայաստան Տուղրիլի առաջնորդությամբ և մեծ
ավերածություններ գործել:

Տուղրիլի մահից հետո սրա յեղբայր Ալփաս-
լանը նոր ուժով մտել ե Հայաստան (1064 թ.)
պաշարել և առել ե մայրաքաղաք Անին և բնա-
կիչների մեծագույն մասին կոտորել, հոյակապ
շենքերը կրակի մատնել: Այնուհետև Կարս, Կա-
րին, Բաբերդ և այլ շատ քաղաքներ ճանաչել
են նրա իշխանությունը:

Այս ընդհանուր ավերածությունների ընթաց-
քում հայ իշխաններից շատերը կամ քաշվել, ամ-
րացել են անառիկ բերդերում և կամ իրենց յեր-
կրները տալով Բյուզանդիայի կայսրին՝ հողեր
են ստացել այդ կայսրության մեջ և այնտեղ
տեղափոխվել: Այսպես, Արծրունյաց Սենեքերիմ
թագավորն իր յերկիր Վասպուրականը տվել եր
Վասիլ Բ. կայսրին և նրանից ստացել Սեբաս-
տիա քաղաքը, ուր և տեղափոխվել եր իր զոր-
քով և ժողովրդով:

Յերբ ասպետ սելջուկները տիրել են հայկա-
կան ամենալավ արոտատեղերին, միառժամանակ
վերականգնվել ե խաղաղությունը, և Ալփասլանի
հաջորդ Մելիք-շահն աշխատել ե յերկրի մեջ խա-
ղաղություն պահպանելով նպաստել կուլտուրա-
կան զարգացման: Ավեր քաղաքներն սկսել են
վերաշինել, հաղորդակցության միջոցներն ու

ճանապարհները վերականգնել, նոր գեղեցիկ տներ, դպրոցներ և հանրագումար հիմնարկութիւններ կառուցանել:

Սակայն այս խաղաղ կուլտուրական շինարարութիւնը յերկար չի տևել, վորովհետև մի նոր խաշնարած ժողովուրդ իր արոտատեղերի սակավութեան և յերաշտների պատճառով թափառելով յեկել հասել ե Հայաստան:

Այս ժողովուրդը մոնղոլներն են յեղել: Սրանք բնակվելիս յեն յեղել Միջին Ասիայում: Այս ցեղերից մեկի առաջնորդ Չինգիզ-խանը XIII-րդ դարի սկզբին կարողացել ե իր հարևան ցեղերին հաղթել, ստրկացնել և միացնելով՝ մղել զանազան կողմեր նվաճելու:

Մոնղոլները մեռելներին այրում եյին կամ թաղում: Այս վերջին դեպքում գերեզմանի մեջ ձգում եյին մեռածի զենքերը, ձիերը, կանանց, աղախիններից և ծառաներից միջանիսին, վորպեսզի մյուս աշխարհում ծառայեն նրան:

Մոնղոլներն սկզբում բնապաշտ եյին յեղել, ապա մի մասն ընդունել ե բուդդայականութիւն, վերջում ել մահմեդականութիւն: Սակայն մոնղոլներն սկզբում շատ համբերատար են յեղել դեպի բոլոր կրօնները. նրանց կարծիքով ամեն ազգ իր աղանդով կարող ե յերջանիկ լինել: Յեվ մոնղոլ խաներն իրենց ուշադրութիւնը դարձրել են վոչ

Թե կրօնի վրա, այլ այդ բոլոր կրօններին պատ-
կանող ժողովուրդներին միացնելու և քաղաքա-
կանապես շահագործելու:

Այս մոնղոլ թաթարներն արշավում ելին վոչ
վորպես կազմակերպված զորամասեր, այլ վոր-
պես հրոսակներ, իրենց կանանց, չերեխաների,
ուկնեցած-չուկնեցածի, անասուկների, վերցրած
գերիների հետ, վորոնք տան ծառայի դեր ելին
կատարում: Սովորաբար ապրում ելին վրանների
մեջ, վոր իրենց հետ քաշ ելին տալիս: Սրանք
առաջ գնալով՝ ավերում, թալանում և սրի ճա-
րակ ելին դարձնում ամեն ինչ:

Ահա այսպիսի հրոսակախմբի գլուխ անցած
մոնղոլ թաթարները Չարմաղանի և հետո Բա-
չուի առաջնորդությամբ մտել են Հայաստան
(1239 թվին), առել են Անին, Կարսը և այլ քա-
ղաքներ, ավերել, այրել և տիրել լավ արոտա-
տեղիներին: Այս արշավանքներից հետո, արոտա-
տեղիներն ընկել են այդ թաթարների ձեռքը,
միաժամանակ խաղաղություն ե տիրել և չեր-
կիրը կանոնավոր հարկատվության չենթարկվել,
մինչև վոր թաթարական մի ուրիշ հրոսակ
Լենկթեմուրի առաջնորդությամբ կրկին մտել ե
Հայաստան (1387 թ.), առել Վանը, Կարինը, Սե-
բաստիան, բնակիչներին կոտորել, շատ կանանց
ձիերի պոչից կապելով բաց դաշտում արձակել,

յերեխաներին մի տեղ հավաքելով ձիավորներին
կոխկրտել տվել, 4000 ի չափ հայ զինվորներ վողջ-
վողջ թաղել տվել:

Սակայն Լենկթեմուրի մահից հետո յերկրի
նախկին տերերը կրկին դուրս են քշել այդ հրո-
սակային թափառաշրջիկ խմբերին և կրկին հաս-
տատվել իրենց տեղերում:

Ահա այսպես Հայաստանի արգավանդ դաշտերն
ու արոտատեղիները դեպի իրենց են գրավել
կիսավայրենի թուրք թաթարական խաշնարած
ժողովրդի հրոսակներին, վորոնք դարերի ընթաց-
քում հրի և օրի ճարակ են դարձրել ամբողջ յեր-
կիրը:

Հայ իշխաններն ու հոգևոր պետերը, տարված
իրենց նեղ, տեղային, ֆեոդալական շահերով,
չեյին կարող լուրջ դիմադրություն ցույց տալ
յեկվորներին: Իսկ հայ շինականը «հարազատ»
տերերի ձեռքին ավելի լավ ու չեր տեսել, քան
այն, ինչ պիտի տեսներ «ոտարների» լծի տակ:
Այդ եր պատճառը, վոր շինական հայը չեր կարող
յերկար դիմադրություն ցույց տալ քոչվոր հրոսա-
կախմբերին: Նա աշխատում եր համակերպվել
նոր տերերին, ինչպես համակերպվել եր հներին:

Այն չափով, ինչ չափով յեկվոր ցեղերը փոխում
եյին իրենց տնտեսական կենցաղը, նրանք վերջ
եյին տալիս իրենց թափառումներին և շարունա-

կական պատերազմներին, Յերկրում խաղաղություն եր հաստատվում և կուլտուրական զարգացման նոր ուղիներ առաջանում, թափառական ցեղերն ընտելանում են յերկրագործության: Քաղաքում ծայր ե առնում արդյունաբերական կյանքը: Ազգամիջյան խաղաղ շփումները հաճախակի յեն դառնում ու ժողովրդական մասսաների համագործակցության առիթները շատանում: Վերջին հաշվով այս թուլացնում ե տիրող ու շահագործող — հայ թե ոտար — դասակարգերի դիրքը և ճանապարհ բաց անում աշխատավոր ժողովրդի ազատագրման առաջ: Խորհրդային իշխանությունը, վոր հիմնաքար դարձավ ժողովրդական մասսաների նվաճած ազատության, միաժամանակ ուղիներ ե հարթում խաշնարածության և հողագործության համագործակցության առաջ: Խաշնարածության բարձր տեխնիկական, կաթնատնտեսության բնագավառում չեւրոպական յեղանակների գործադրությունը, անասնապահության համայնական յեղանակների մշակումը զուգորդելով յերկրագործության նոր տեխնիկական և հասարակական յեղանակների կիրարկումին՝ պիտի վերջ տա արոտատեղերի և վարելահողերի դարավոր պալքարին և այդ պայքարի վերջին մնացորդներին:

13. ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ.

Հին ժամանակներու թագավորների անհատական քաջութիւնը չափազանց մեծ նշանակութիւն ունէր, այնպէս վոր յերբ յերկու թշնամի զորագնդեր միմյանց դեմ բանակ ելին դնում, սրանցից ինքնավստահ թագավորն առաջարկում եր մյուս թագավորին հանդես գալ իրեն հետ կռվելու, և ով վոր հաղթեր, նրա կողմը հաղթանակող համարվեր, և հակառակ բանակն առանց արշուն թափելու անձնատուր լիներ: Այսպիսի դեպքերում, յերբ կռիվ հրավիրված թագավորը չեր վստահանում իր անձնական ուժի վրա, իր բանակապետներից ամենաքաջին հագցնում եր իր զգեստը և ուղարկում կռվելու: Այսպէս՝ հռոմայեցիների Դիոկղետիանոս կայսրը, յերբ գոթացի Նուշե թագավորից հրավեր ստացավ մարտնչելու, հայոց Խոսրով թագավորի վորդի Տրդատին ուղարկեց կռվելու: Սա հաղթեց Նուշեյին, գրկեց և բերեց կայսրի առաջ: Այս հաղթութեան համար Դիոկղետիանոս կայսրը նրան զորք տվեց գալու և վերագրավելու իր հայրենի գահը:

Մի այսպիսի դեպք ել տեղի յե ունեցել, յերբ հոնացի Հոնանգուր թագավորը, պարսից յերկիրն ավարելուց հետո, պատգամ ե ուղարկել Շապուհ թագավորին, թե ինչո՞ւ իզուր արշուն թափենք.

յեկ ժարտնչենք յես և դու: Խնքը, հունաց թագա-
վորը հիսուն տակ զրահով ամրացրել եր իր բարձր
և լայն հասակը, բևեռապինդ սաղավարտ եր դրել
իր ահագին գլխին և յերեք-թզյան ճակատը պղնձե
տախտակով զարդարել, ահագին մեծության նի-
զակը բռնել եր ձեռին և բոցեղեն սուսերով ահա-
բեկում եր նայողին:

Շապուհը մտատանջութիւն մեջ ե ընկնում.
սակայն նրան ասում են, թե պարսից զորքի մեջ
Բաբել անունով մի քաջ մարդ կա, վոր հավա-
նորեն կարող ե այդ հսկային գետին գլորել: Շա-
պուհն անմիջապես կանչում ե նրան, արքայական
զրահ հագցնում և ուղարկում ժարտնչելու: Բա-
բելը վագրակերպ սաղավարտը դնում ե գլխին,
մեջքին սուր կապում, վոսկեկապ վահանը ձախ
ուսին ձգում և յերկար նիզակն աջ ձեռն առ-
նելով, թռչում ե սև ձիու վրա և հարձակվում
հոնաց թագավորի վրա ու կարճատև կռվից հետո
սպանում նրան:

Շապուհը հիացած հարցնում ե, թե ինչ պարգև
ե ցանկանում:

Բաբելը պատասխանում ե. «Վերցրու քո դռան
առջև դրված պղնձե սանդը»:


Իսկ այս սանդը մոխիրով լի յեր, և ով վոր
գալիս եր արքունիք, ծեծում եր և ասում, «Սյուն-

յաց տերութիւնն այս մոխրի պես թո՛ղ չքա-
նա՞: Շապուհն իմանում ե, վոր Բաբելը Սյուն-
յաց նախարարութեան կոտորածից ազատված
միակ ժառանգն ե, հրաժայտւմ ե վերցնել սանդը
և վերադարձնել Բաբելին Սյունյաց կալվածներն
ու նախարարական պատիվը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Կենդանիներին տիրելը	3
2. Նոր քոչատեղում	9
3. Քոչվորն ու յերկրագործը	13
4. Ծերերի դատաստանը	21
5. Թափառական տոհմերի միացումը	29
6. Առանց ցանքսի	36
7. Ցանքս առանց արորի և գութանի	39
8. Վար մարդկանց միջոցով	45
9. Կենդանիներով վարելը	49
10. Յերկրագործության դժվարությունը	51
11. Սերունդ	54
12. Վարելահողի և արոտատեղի դարավոր պայ- քարը Հայաստանում	59
13. Պատերազմներ	69





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0035702

A I
H 1678